Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարության
2017 թ. ---------- --- -ի
N արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[ ] նոյեմբերի 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ և սահմանումներ iv

1. Ներածություն 1

Ընդհանուր 1

Քաղաքականության նպատակները 2

Օրենսդրության և օրենսդրական բարեփոխումների հետ կապը 3

2. ՊՄԳ-ների նպատակները 4

3. ՊՄԳ-ների սահմանումը և բնութագրերը 5

Կարևոր հատկանիշները 5

Տևողությունը 6

Թույլատրվող հարաբերությունները 7

ՊՄԳ ձևաչափով ծրագրերի պահանջներին բավարարող ոլորտները 9

Բացառվող հարաբերությունները 10

4. ՊՄԳ ձևաչափի կիրառման նպատակահարմարությունը հիմնավորող գործոններ (փողի դիմաց արժեքի խթաններ) 11

5. ՊՄԳ-ների նախագծման և կառուցվածքի սահմանման մոտեցումը 13

Ընդհանուր սկզբունքները 13

Ռիսկերի գնահատումը և բաշխումը 14

Վճարման մեխանիզմը 14

Վաղաժամկետ դադարեցման դիմաց վճարումները 15

Մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումները 16

Վեճերի լուծումը 16

6. Ինստիտուցիոնալ շրջանակը 17

ՊՄԳ-ների լայն ինստիտուցիոնալ շրջանակը 17

ՊՄԳ ստորաբաժանումը 17

Պետական պատվիրատուի պարտականությունները 19

7. ՊՄԳ ծրագրերի նախապատրաստման փուլերը 19

8. ՊՄԳ ծրագրի գնահատումը 20

Ընդհանուր 20

Ֆիսկալ ազդեցության գնահատումը 24

9. Մասնավոր գործընկերոջ ընտրությունը 25

ՊՄԳ գործընթացը Հայաստանում 25

Հայտատուների հետ փոխգործակցությունը հայտերի ներկայացման ժամանակահատվածում 28

Մեկ աղբյուրի հետ (ուղղակի) բանակցությունները 29

Սեփական նախաձեռնությամբ ներկայացվող առաջարկները 30

Մասնավոր գործընկերոջ կողմից աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը 31

10.Պետական ֆինանսավորումը և աջակցությունը 32

11. Պայմանագրի մշտադիտարկումը, վերահսկողությունը, հաշվետվությունը և գնահատումը 34

Մշտադիտարկումը և վերահսկողությունը 34
Թափանցիկությունը 34
ՊՄԳ-ների վերաբերյալ տվյալները 34
Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատումը 35

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Պատվիրատու	ՊՄԳ պայմանագրի շրջանակներում հանրային գործընկերը (շնորհատուն), որը Քաղաքականությունում երբեմն անվանվում է «պետական պատվիրատու»,
ՌՆԿ	«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ,
Որոշում	ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը հաստատելու մասին» թիվ 1241-Ն որոշում,
ԵՄ	Եվրոպական Միություն,
Տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվություն	առանցքային փաստաթուղթ, որի հիման վրա որոշում է կայացվում ծրագրի՝ ՊՄԳ ձևաչափով իրականացնելու նպատակահարմարության և այդ ձևաչափով իրականացնելու դեպքում ռեսուրսների օգտագործման արդյունավետության վերաբերյալ: Հաշվետվությունը ներառում է ծրագրի մասին մանրամասն տեղեկատվություն և գնահատման հիմնական արդյունքները (այդ թվում՝ փողի դիմաց արժեքը, տնտեսական, ֆինանսական, ֆիսկալ գնահատումը, ֆինանսավորման ծրագիրը, կազմակերպման ծրագիրը, ռիսկերի գնահատումը և այլ կարևոր տեղեկատվություն),
Կառավարություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն,
Տնտեսական զարգացման նախարարություն	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն,
Ֆինանսների նախարարություն	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,
Նոր օրենք	ՊՄԳ մասին ՀՀ նոր օրենք, որը կմշակվի և կներկայացվի ՀՀ Ազգային ժողով,
Քաղաքականություն	սույն քաղաքականությունը,

ՊՄԳ	պետություն-մասնավոր գործընկերություն,
ՊՄԳ պայմանագիր	ՊՄԳ ծրագրի իրականացման նպատակով պետական և մասնավոր գործընկերների միջև կնքվող պայմանագիր (ներառյալ կոնցեսիայի պայմանագրերը),
ՊՄԳ ստորաբաժանում	ցանկացած ստորաբաժանում կամ առանցնացված կառուցվածքային միավոր, որին վերապահվելու են ՊՄԳ առանձնացված լիազոր մարմնի գործառույթները,
ՀՀՀԾ (PSC)	հանրային հատվածի համեմատական ծախս (Public Sector Comparator)՝ հանրային հատվածի ծախսերի գնահատական՝ ծրագիրը պետական գնումների ավանդական ձևաչափով իրականացնելու պարագայում,
Մասնավոր գործընկեր	ՊՄԳ պայմանագրի՝ մասնավոր հատվածը ներկայացնող կողմ (ներառյալ կոնցեսիոներները),
ՄՀՄ	մասնավոր հատվածի մասնակցություն, որը հանդիսանում է ավելի լայն հասկացություն քան «ՊՄԳ»-ն է (տե՛ս պարբերություն 1.3),
Հանրային գործընկեր	ՊՄԳ պետական պատվիրատու կամ ծրագիրն իրականացնող լիազոր մարմին՝ կախված համատեքստից,
Փողի դիմաց արժեք	ունի 8.4 պարբերությունում վերագրված նշանակությունը:

1. Ներածություն

Ընդհանուր

1.1 Կառավարությունն ստանձնել է ՊՄԳ-ների հետևողական, համակարգային մոտեցման և Հայաստանում դրանց իրականացման համար ամուր հիմքերի մշակման հանձնառություն: Կառավարության նպատակն է իրականացնել մասնավոր հատվածի ներուժի և ռեսուրսների հնարավորինս արդյունավետ համախմբում (հնարավորության դեպքում միջազային փորձին համապատասխան)՝ նպաստելու Հայաստանի տնտեսական և սոցիալական զարգացմանը:

1.2 Միջազգային պրակտիկայում և սույն Քաղաքականությունում օգտագործվող «ՊՄԳ» եզրույթը լայն հասկացություն է, որը կարող է իրագործվել պայմանագրերի և ինստիտուցիոնալ մոդելների (ներառյալ կոնցեսիաների) տարբեր տեսակների միջոցով:

1.3 Ենթակառուցվածքային ծրագրերում ՄՀՄ-ն առավել լայն է, քան «ՊՄԳ»-ն: Կառավարությունը (համապատասխան դեպքերում) խրախուսում է ՄՀՄ բոլոր ձևերը՝ ներառյալ ծառայությունների մատուցման կարճաժամկետ պայմանագրերը և պետություն-մասնավոր փոխգործակցության կամ համագործակցության այլ ձևերը: Չնայած դրան՝ Քաղաքականությունում դիտարկվում է միայն ՄՀՄ-ի ՊՄԳ-ն ներառող ենթախումբը, որն առավել մանրակրկիտ սահմանվում և բացատրվում է ստորև:

1.4 Քաղաքականության շրջանակներում ՊՄԳ-ներին ազգային ենթակառուցվածքների զարգացման այլ մոտեցումների նկատմամբ ի սկզբանե նախապատվություն չի տրվում: Քաղաքականությունում փորձ է արվում վեր հանել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում, Կառավարության համոզմամբ, ՊՄԳ-ները կարող են և պետք է կիրառվեն, ինչպես նաև սահմանել միասնական հիմքեր Հայաստանում դրանց կիրառման համար:

1.5 Կառավարությունը ցանկանում է կիրառել և խթանել ՊՄԳ-ներն այն դեպքերում, երբ վերջիններս կարող են տնտեսությանը և հասարակությանն առավել մեծ զուտ օգուտներ բերել, քան հանրային հատվածի ավանդական ծրագրերը: ՊՄԳ-ները կկիրառվեն, եթե ողջամտորեն հիմնավորվի, որ վերջիններիս փողի դիմաց արժեքն ավելի բարձր է, քան կլիներ ավանդական պետական գնումների դեպքում, կամ հատուկ հանգամանքներում հանրային նշանակության ենթակառուցվածքների ստեղծման և հանրային ծառայությունների մատուցման համար վերջիններս ամենագրավիչ հիմքն են հանդիսանում՝ համաձայն Կառավարության կողմից դրանց համար սահմանված այլ չափանիշների:

Քաղաքականության նպատակները

1.6 Քաղաքականության նպատակներն են. (ա) Հայաստանում բարգավաճող ՊՄԳ ռեժիմի ստեղծման, խթանման և պահպանման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի և փոփոխությունների համար բարձր մակարդակի քաղաքականության շրջանակի սահմանում, և (բ) Հայաստանում ՊՄԳ միջազգային լավագույն փորձի ներդրման խրախուսում: Կառավարությունը մտադրված է հետևել Հայաստանի իրավական և ինստիտուցիոնալ լայն շրջանակին համապատասխանող և Հայաստանի կարիքներին ու վերջինիս առջև ծառացած խոչընդոտներին հարմարեցված ՊՄԳ միջազգային լավագույն փորձին:

1.7 Կառավարությունն ստանձնում է հայաստանյան ՊՄԳ ծրագրերում և՛ տեղական, և՛ օտարերկրյա ՄՀՄ-ն խրախուսելու համար նպաստավոր միջավայր ստեղծելու հանձնառություն: Կառավարությունն աջակցում է ՊՄԳ ծրագրերին և հասկանում մասնավոր հատվածի հիմնավոր մտահոգությունները և պահանջները՝ հարգելով վերջինիս սեփականության և պայմանագրային իրավունքները և առևտրային (կոմերցիոն) բնույթի ակնկալիքները:

1.8 Քաղաքականությունը սահմանում է ՊՄԳ ծրագրերի իրականացմանը և առաջընթացին ու հանրային շահերի պաշտպանությանը նպաստող, ինչպես նաև Հայաստանում ՊՄԳ ծրագրերի խիստ կառավարումն ապահովող ինստիտուցիոնալ շրջանակ: Կառավարությունը կհասնի դրան ՊՄԳ-ների նախապատրաստման, իրականացման և կառավարման համար անհրաժեշտ հստակ և թափանցիկ գործընթաց ապահովելու ինստիտուցիոնալ պահանջների իրականացման միջոցով:

1.9 Հստակ և ամբողջական քաղաքականության ձևակերպման կարևորագույն պատճառներից մեկը ՊՄԳ պայմանագրերի երկարաժամկետ բնույթն է. պայմանագրում առկա ցանկացած սխալ կամ թերություն կարող է երկարաժամկետ և հնարավոր ծախսատար հետևանքներ ունենալ հանրային հատվածի համար: Քաղաքականությունը նվազագույնին է հասցնում նման սխալների և թերությունների շրջանակը՝ նոր ՊՄԳ համակարգի նկարագրման և ներդրման, ինչպես նաև վերջինիս տարբեր ասպեկտների և բաղադրիչների գործողության վերաբերյալ Կառավարության ակնկալիքների սահմանման միջոցով: Քաղաքականությունն արտահայտում է ՊՄԳ ծրագրերի նկատմամբ Կառավարության հստակ հակվածությունը, խրախուսում մասնավոր հատվածի հետևողական հետաքրքրությունը դրանց նկատմամբ, խթանում է նորարարական ՊՄԳ-ները և ռիսկերի ու արդյունքների տեսանկյունից բարելավում է թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

1.10 Հետագա տարիներին ՊՄԳ զարգացման ծրագրի կայուն նախապայմաններ ձևավորելու նպատակով՝ Քաղաքականությունը հիմքեր է ստեղծում լավագույն փորձին համապատասխանող պիլոտային ծրագրերի մշակման մեկնարկի համար:

Օրենսդրության և օրենսդրական բարեփոխումների հետ կապը

1.11 Քաղաքականությունում «ՊՄԳ» եզրույթը լայն առումով ունի նույն իմաստը, ինչը վերջինս կունենա Նոր օրենքում: ՊՄԳ-ի հայեցակարգը պետք է ներառի և՛ կոնցեսիաները, և՛ ՊՄԳ-ի այլ ձևերը:

1.12 Քանի որ Հայաստանում գործող գնումների օրենդրության համաձայն՝ ՊՄԳ գործարքների նկատմամբ տարածվում է պետական գնումների օրենսդրությունը, որը հարմարեցված չէ ՊՄԳ-ներին և չի ապահովում ծրագրի նախաձեռնողներին (օրինակ՝ սեփական նախաձեռնությամբ առաջարկներ ներկայացնողներին) և ֆինանսավորողներին բավարար երաշխիքների և խթանների տրամադրումը, ՀՀ առաջնային օրենդրության՝ ՊՄԳ-ն անմիջականորեն կարգավորորող հիմնական գործիքը կլինի Նոր օրենքը: Նոր օրենքը կնախատեսի Հայաստանում ՊՄԳ-ների սահմանման, շնորհման և իրականացման մասով կիրառելի կանոնների և ընթացակարգերի հստակ, բազմակողմանի և ինքնուրույն համախումբ, որը կօժանդակի ՊՄԳ նոր համակարգն առավել ամբողջական դարձնելու և վերջինիս համար հստակ, ուժեղ իրավական կարգավորման շրջանակ ապահովելու հարցում: Նոր օրենքով կկարգավորվեն ՊՄԳ-ի բոլոր մոդելները՝ ներառյալ կոնցեսիաները[1]: Նոր օրենքով պետք է սահմանվեն միասնական պահանջներ ՊՄԳ-ի բոլոր տեսակների համար[2]:

1.13 Ինչպես նշվեց վերևում, Քաղաքականությունը կարող է որոշ ոչ էական առում-ներով չհամապատասխանել Հայաստանում գործող օրենքների ներկայիս խմբագրությանը: Քաղաքականությունը նախանշում է Կառավարության երկարաժամկետ մտադրությունը: Ցանկացած օրենսդրություն, որը էականորեն չի համապատասխանում (կամ ընկալվում է որպես այդպիսին) Քաղաքականությանը, կամ կարող է Նոր օրենքի գործողությունն ապահովելու նպատակով ունենալ վերջինիցս բխող փոփոխության կարիք կամ դրա արդյունքում բարելավվի, պետք է զուգահեռաբար համապատասխանեցվի Նոր օրենքին: Ակնկալվում է, որ Նոր օրենքով և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով որոշակի փոփոխություններ կկատարվեն Հայաստանի ընդհանուր և ոլորտային

[1] Ներկայումս կոնցեսիաներն ընկալվում են և ԵՄ դիրեկտիվներով համապատասխանաբար սահմանվում են որպես ՊՄԳ-ի ձև, որի շրջանակներում, սովորաբար, մասնավոր գործընկերոջ (կոնցեսիոների) հասույթի զգալի մասը ձևավորվում է ծառայության սպառողների կողմից կատարվող վճարումներից, իսկ կոնցեսիոները ստանձնում է ծրագրի հետ կապված շուկայական և գործառնական որոշ ռիսկեր:

[2] Չնայած դեռևս պետք է դիտարկվի՝ արդյոք անհրաժեշտ կլինի ՊՄԳ-ի կոնցեսիոն և ոչ կոնցեսիոն տեսակների պրակտիկ տարբերակումներից որևէ մեկին հատուկ ուշադրության արժանացնել Նոր օրենքի շրջանակներում:

օրենքներում, որի արդյունքում ուժը կորցրած կճանաչվեն կամ կփոփոխվեն դրանցում սահմանված ՊՄԳ-ն կարգավորող կամ վերաբերող որոշ դրույթներ:

1.14 Քաղաքականության փաստաթղթում տեղ գտած պնդումները կիրառելի են բոլոր ՊՄԳ-ների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ ուղղակիորեն նշված է հակառակը:

1.15 Քաղաքականության փաստաթղթում ներառված ոչ բոլոր պնդումներն են համապատասխան օրենսդրության մեջ կամ ենթաօրենսդրական ակտերում տեղ գտնելու: Քաղաքականությունը նաև նպատակ ունի ապահովել օգտակար համատեքստ և բացատրություններ, որոնք օրենսդրության մեջ պարտադիր ներառման ենթակա չեն, և առավելապես ուղղված են օրենսդրության մշակման և մեկնաբանության համար լայն շրջանակի ապահովմանը:

2. ՊՄԳ-ների նպատակները

2.1 ՊՄԳ-ները ենթակառուցվածքների և դրանց հետ կապված հանրային ծառայությունների մատուցման՝ ֆիսկալ տեսանկյունից առավել պատասխանատու և գերադասելի զարգացմանը հասնելու միջոց են: Սակայն դա ինքնստինքյան ստացվող արդյունք չէ: Դա կախված է տարբեր գործոններից, որոնք պայմանավորում են ՊՄԳ-ների ինստիտուցիոնալ մոդելի հաջող սահմանումը՝ ներառյալ կոնկրետ ծրագրի և այն ուժի մեջ դնող պայմանագրային համաձայնությունների նախագծումը և ՊՄԳ-ների ուսումնասիրության ընթացակարգերի որակը: ՊՄԳ-ների առաջնային նպատակները (որոնցից առնվազն մի քանիսը պետք է իրագործվեն բոլոր ՊՄԳ-ներում, չնայած ոչ պարտադիր՝ միաժամանակ), որոնք յուրաքանչյուրը կապված են հանրային ծառայությունների առնչությամբ փողի դիմաց արժեքը բարձրացնելու գերակա նպատակի հետ, հետևյալն են.

(ա) ենթակառուցվածքների կենսապարբերաշրջանի անհրաժեշտ ծախսերի կրճատում և դրանց շինարարության, շահագործման և պահպանման որակի բարելավում,

(բ) ակտիվի շահագործման ժամկետի ընթացքում դրա պատշաճ և ժամանակին պահպանման ապահովում,

(գ) հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիության բարձրացում,

(դ) հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների որակի բարելավում,

(ե) մասնավոր հատվածի փորձից, ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտների ստացում:

2.2 ՊՄԳ ձևաչափ կիրառելու օժանդակ նպատակներն են.

(ա) ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների հետ կապված պետական և համայնքային մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների կողմից կատարվող ծախսերի մասով առավել թափանցիկության և բյուջետային որոշակիության ապահովում,

(բ) հանրային ծառայությունների ոլորտում ավելի հաճախորդակենտրոն մշակույթի ստեղծում,

(գ) նորարարության խրախուսում,

(դ) հանրային ենթակառուցվածքների ձեռքբերման գործընթացում թափանցիկության և հանրության առջև հաշվետվողականության բարձրացում,

(ե) երկրի հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների վերաբերյալ ձեռքբերվող տեղեկատվության որակի բարելավում, ինչը թույլ կտա իրականացնել ավելի արդյունավետ համեմատական վերլուծություն և ուղղիչ միջոցառումներ,

(զ) նոր ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման արագացում և այդպիսով գոյություն ունեցող ենթակառուցվածքների ժամանակին նորացում, եթե դա այլ կերպ իրագործելու հնարավորություն առկա չէ:

3. ՊՄԳ-ների սահմանումը և բնութագրերը

Կարևոր հատկանիշները

3.1 Քաղաքականության և Նոր օրենքի նպատակներից ելնելով՝ ակնկալվում է, որ ՊՄԳ-ն պետք է ունենա հետևյալ նվազագույն բնութագրերը, իսկ ցանկացած նախագիծ, որն ունի նշված բնութագրերը, համարվի ՊՄԳ: Ակնկալվում է, որ ՊՄԳ-ն պետք է.

(ա) ապահովի հանրային ենթակառուցվածք (ներառյալ՝ դրա պահպանումը) և (կամ) հանրային ծառայություն, այսինքն՝ ենթակառուցվածք կամ ծառայություն, որի հասանելիության ապահովումը կամ մատուցումը գտնվում է պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության տակ և ավանդաբար իրականացվում է հանրային հատվածը ներկայացնող կազմակերպության կողմից կամ իրականացվի հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում,

(բ) արտահայտվի պետական պատվիրատուի և մասնավոր գործընկերոջ միջև կնքված, իրավական պարտավորություն առաջացնող երկարաժամկետ (սովորաբար՝ 3–50 տարի կամ ավել ժամկետով) պայմանագրի ձևով,

(գ) մասնավոր գործընկերոջ պատասխանատվության շրջանակներում ներառի առնվազն համապատասխան ակտիվների պահպանումը՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,

(դ) համապատասխան ռիսկեր և պարտականություններ կփոխանցի մասնավոր գործընկերոջը:

3.2 ՊՄԳ տեսակների մեծամասնության դեպքում անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման մեծ մասն ապահովում է մասնավոր գործընկերը: Սակայն մասնավոր գործընկերոջ կողմից ֆինանսավորումը ՊՄԳ-ի էական հատկանիշ չի հանդիսանում (տե՛ս պարբերություն 3.8):

3.3 Մասնավոր գործընկերը վարձատրվում է ՊՄԳ ծառայությունների մատուցման և աշխատանքների իրականացման դիմաց: ՊՄԳ շրջանակներում մասնավոր գործընկերոջ վարձատրությունը կարող է ստացվել ծառայության սպառողներից (ուղղակի կամ անուղղակի ձևով), պետական կամ համայնքային բյուջեից, դոնորների միջոցներից կամ նշված աղբյուրների համակցությունից:

3.4 ՊՄԳ-ների պատվիրատու կարող են լինել (1) պետությունը և վերջինիս անունից գործող պետական կառավարման ցանկացած մարմին կամ Կառավարության կողմից լիազորված ցանկացած այլ մարմին կամ իրավաբանական անձ, (2) տեղական ինքնակառավարման մարմինները և վերջիններիս կողմից լիազորված ցանկացած իրավաբանական անձ տեղական վարչական մարմին կամ կազմակերպություն, որը գործում է տեղական ինքնակառավարման մարմնի անունից:

3.5 ՊՄԳ պայմանագիր կնքելու, բայց ոչ պարտադիր հայտի ներկայացման պահին մասնավոր գործընկերը պետք է հանդիսանա հայաստանյան ընկերություն:

Տևողությունը

3.6 ՊՄԳ-ի տևողությունը, որը սովորաբար կազմում է 3–50 տարի, որոշվելու է հաշվի առնելով հետևյալը.

(ա) մասնավոր գործընկերոջ կողմից ֆինանսավորված ակտիվների տնտեսական ծառայության ժամկետը,

(բ) մասնավոր գործընկերոջ կողմից կատարված ներդրումների ծախսածածկման (ներառյալ՝ ֆինանսավորման հետ կապված ծախսերը) և պատշաճ շահույթ ստանալու համար պահանջվող ողջամիտ ժամկետը,

(գ) մասնավոր գործընկերոջ կողմից տվյալ հարաբերություններից ցանկալի օգուտներն ապահովելու (օրինակ՝ ցանկալի արդյունավետության կամ ծառայությունների բարելավում) համար բավարար ժամանակահատված,

(դ) ոլորտի և ենթաոլորտի բնութագրերը:

Թույլատրվող հարաբերությունները

3.7 Ստորև ներկայացված են հարաբերությունների օրինակներ, որոնք 3.1 – 3.5 պարբերություններում նշված էական հատկանիշներն ունենալու դեպքում կհամարվեն ՊՄԳ-ներ: Ներկայացված ցանկը սպառիչ չէ, և յուրաքանչյուր օրինակի համար նշված կոնկրետ մանրամասները միայն առաջարկի և կողմնորոշիչ բնույթ ունեն: Որոշ ՊՄԳ-ներ կարող են ունենալ մեկից ավելի օրինակներում ներկայացված տարրեր:

(ա) Գոյություն ունեցող գույքը ներառող պայմանագրեր

(i) *Շահագործման և պահպանման պայմանագիր:* Մասնավոր գործընկերոջ հետ կնքվում է պայմանագիր՝ սահմանված ժամանակահատվածում գոյություն ունեցող ենթակառուցվածքային ծառայություն մատուցելու կամ ակտիվ շահագործելու և պահպանելու նպատակով: Սովորաբար մասնավոր գործընկերը հանրային գործընկերոջից (այլ ոչ սպառողներից) ստանում է վճար և խրախուսավճարներ՝ հիմնվելով համաձայնեցված կատարողական ցուցանիշների և վերջնարդյունքների վրա:

(ii) *Շահագործման կոնցեսիա:* Մասնավոր գործընկերն իրականացնում է գոյություն ունեցող ենթակառուցվածքային ծառայության կամ գույքի շահագործում և պահպանում: Մասնավոր գործընկերն իրավունք ունի ստանալ հասույթ՝ սպառողներից գանձվող վճարներից՝ գումարած հնարավոր սուբսիդիաներ հանրային գործընկերոջից, հանած (ինչն առավել քիչ հավանական է) ենթակառուցվածքների (որոնք որոշ դեպքերում վարձակալությամբ տրվում են մասնավոր գործընկերոջը) օգտագործման համար հանրային գործընկերողը կատարվող վճարումները:

(iii) *Վերականգնում-Շահագործում-Փոխանցում (ՎՇՓ)*: Մասնավոր գործընկերոջ հետ կնքվում է պայմանագիր՝ գոյություն ունեցող ակտիվը վերականգնելու և որոշ ժամկետով շահագործելու նպատակով՝ մինչև այն հանրային գործընկերոջը հետ փոխանցելը: Մասնավոր գործընկերը ստանում է ճանապարհային վճարներ, այլ վճարներ կամ վճարումներ: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին ակտիվը ետ է փոխանցվում հանրային գործընկերոջը:

(բ) Նոր գույք ներառող պայմանագրեր

(i) *Կառուցում-Փոխանցում-Վարձակալություն (ԿՓՎ):* Մասնավոր գործընկերոջ հետ կնքվում է պայմանագիր՝ նոր ենթակառուցվածքի շինարարության, շահագործման և պահպանման նպատակով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո սեփականության իրավունքը փոխանցվում է հանրային գործընկերոջը: Այնուհետև վերջինս գույքը վարձակալությամբ հանձնում է մասնավոր գործընկերոջը՝ վարձակալական վճարի դիմաց: Վարձակալության ժամկետի ավարտին ակտիվը փոխանցվում է պատվիրատուին:

(ii) *Կառուցում-Շահագործում-Փոխանցում (ԿՇՓ):* Մասնավոր գործընկերոջ հետ կնքվում է պայմանագիր՝ հանրային ենթակառուցվածքների շինարարության և որոշ ժամկետով շահագործման նպատակով՝ մինչև դրանք հանրային գործընկերոջը հետ փոխանցելը: Մասնավոր գործընկերը ստանում է ճանապարհային վճարներ, այլ վճարներ կամ վճարումներ: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին գույքի նկատմամբ տիրապետման իրավունքը փոխանցվում է հանրային գործընկերոջը:

(iii) *Նախագծում-Կառուցում-Ֆինանսավորում-Շահագործում (ՆԿՖՇ)* (կամ Նախագծում-Կառուցում-Ֆինանսավորում-Շահագործում-Պահպանում (ՆԿՖՇՊ)): Մասնավոր գործընկերոջ հետ կնքվում է պայմանագիր՝ նոր ենթակառուցվածքի նախագծման, ֆինանսավորման, շինարարության, շահագործման և պահպանման նպատակով: Մասնավոր գործընկերը ստանում է ճանապարհային վճարներ, այլ վճարներ կամ վճարումներ: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին ակտիվը փոխանցվում է հանրային գործընկերոջը (սովորաբար այս կառուցվածքը սկզբունքորեն նույնն է, ինչ՝ ԿՇՓ-ն):

(iv) *Կառուցում-Տիրապետում-Շահագործում-Փոխանցում (ԿՏՇՓ):* Այս սխեման նման է ՆԿՖՇ-ին (կամ ԿՇՓ-ին), բացառությամբ այն հանգամանքի, որ մասնավոր գործընկերը ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում հանդիսանում է ակտիվի սեփականատերը: Պայմանագրի ավարտին ակտիվը փոխանցվում է հանրային գործընկերոջը:

(v) *Կառուցում-Տիրապետում-Շահագործում (ԿՏՇ):* Այս հարաբերությունը նման է ԿՏՇՓ-ին այն տարբերությամբ, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին սեփականության իրավունքը հանրային գործընկերոջը չի փոխանցվում: Մասնավոր գործընկերը պահպանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և տիրապետումը՝ անսահմանափակ ժամկետով:

3.8 ՊՄԳ-ների գերակշիռ մեծամասնությունը ներառում է մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորում: Սակայն Նոր օրենքի և Քաղաքականության շրջանակներում ՊՄԳ պետք է համարվի նաև այն հարաբերությունը, որի շրջանակներում ենթակառուցվածքի և (կամ) ծառայության համար ամբողջ ֆինանսավորումը կամ դրա մեծ մասը տրամադրվում է պետության կողմից կամ միջոցով, այն է՝ «նախագծում-կառուցում-շահագործում» (ՆԿՇ) սխեման:

3.9 ՊՄԳ ձևերից մեկը ներառում է հարաբերություն, որի դեպքում մասնավոր գործընկերը վարձատրվում է պետական մարմնի (հանրային ծառայությունները կարգավորողի) կողմից կարգավորվող սպառողական սակագների հիման վրա: Հարաբերության այս տեսակը, որը երբեմն անվանում են «կարգավորվող հանրային ծառայություն», նախագծի կենսաշրջանի ընթացքում պահանջում է հատուկ մոտեցում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ կարգավորումն իրականացվում է ոչ թե *պայմանագրով* (ինչպես դասական ՊՄԳ-ի դեպքում), այլ՝ *հանձնաժողովի կամ պետական մարմնի կողմից*: Անհրաժեշտություն է առաջանում փոփոխելու նախապատրաստման, մրցույթի անցկացման և վերահսկողության գործընթացների որոշակի դրույթներ, իսկ հանրային ծառայությունները կարգավորողը պետք է ներգրավված լինի ծրագրի նախապատրաստման գործընթացի մեկնարկից և հատկապես՝ ծրագրի գնահատման ընթացքում՝ որպես ծրագրի հետագա առաջընթացը թույլատրող պայման: Քաղաքականությունն այս խնդիրներին չի անդրադառնում: Քաղաքականության որոշակի դրույթներ կիրառելի չեն կարգավորվող հանրային ծառայությունների՝ սույն պարբերությունում նկարագրված տեսակների համար: Կոնցեսիոն սխեմայի այս տեսակի առանձնահատկությունները և հանրային ծառայությունները կարգավորողի ներգրավման անհրաժեշտությունը, անհրաժեշտության դեպքում կսահմանվի օրենսդրության այլ հատվածներում:

3.10 ՊՄԳ-ի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից ֆինանսավորված և կառուցված ակտիվի սեփականատեր կարող են հանդիսանալ հանրային գործընկերը կամ մասնավոր գործընկերը՝ ՊՄԳ-ի գործողության ժամկետի ընթացքում: Եթե սեփականատերը մասնավոր գործընկերն է, ապա ՊՄԳ պայմանագրի ավարտին ՊՄԳ օբյեկտը սովորաբար փոխանցվում է հանրային գործընկերոջը, չնայած գոյություն ունեն ՊՄԳ-ների օրինակներ, որտեղ մասնավոր հատվածը պահպանում է սեփականության իրավունքը («ԿՏՇ»՝ Կառուցում-Տիրապետում -Շահագործում):

ՊՄԳ ձևաչափով ծրագրերի պահանջներին բավարարող ոլորտները

3.11 Նոր օրենքի շրջանակներում ՊՄԳ ձևաչափով ծրագրերի պահանջներին բավարարող ոլորտները և ենթաոլորտները Հայաստանում հետևյալն են.

(ա) էներգետիկայի բնագավառ (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր),

(բ) ջրային ոլորտ (ջրի մատակարարման, բաշխման, մաքրման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ և ոռոգման համակարգեր),

(գ) ավտոմոբիլային ճանապարհներ և ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցներ, երկաթուղիներ, մետրոյի համակարգեր, ավտոկայաններ և ավտոբուսային տրանսպորտի հետ կապված այլ ենթակառուցվածքներ և ծառայություններ, այլ հանրային տրանսպորտի ծառայություններ, օդանավակայաններ, հսկիչ կշռման համակարգեր և այլ տրանսպորտային ենթակառուցվածքներ,

(դ) կոշտ թափոնների հավաքում, վերամշակում և հեռացում,

(ե) համայնքային կայանատեղիներ և այլ համայնքային ծառայություններ,

(զ) փոստային ենթակառուցվածքներ և ծառայություններ,

(է) առողջապահություն,

(ը) կրթություն,

(թ) զբոսաշրջություն, մշակույթ և սպորտ,

(ժ) սոցիալական բնակարանաշինություն,

(ժա) սոցիալական ձեռնարկատիրություն,

(ժբ) սոցիալական աջակցող ցանց,

(ժգ) ապրանքապարենային բանկ,

(ժդ) տարեցների, երեխաների և ընտանիքների այլընտրանքային ինովացիոն ծառայություններ,

(ժե) հաշմանդամների ներառում:

(ժզ) ցանկացած այլ ոլորտ կամ ենթաոլորտ, որոնցում ՊՄԳ ծրագրերի իրականացումն օրենքով արգելված չէ, սակայն միայն պատասխանատու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի նախնական հաստատման դեպքում (մինչև ՊՄԳ Տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվության ներկայացումը),

Բացառվող հարաբերությունները

3.12 ՄՀՄ ընդգրկող որոշակի հարաբերություններ ՊՄԳ չեն համարվում. դրանք կարող են ունենալ ՊՄԳ-ի կարևոր հատկանիշներից որոշները, սակայն ոչ բոլորը:

3.13 ՊՄԳ չի համարվում այնպիսի պայմանագիրը, որի շրջանակներում մասնավոր գործընկերը նախագծում, ֆինանսավորում և կառուցում է ենթակառուցվածքները, որից բացի այլ հետագա պարտականություններ չունի, իսկ հանրային գործընկերոջ կողմից նախագծման և շինարարության դիմաց վճարումը կատարվում է վերջինիս ավարտին կամ բաշխվում է որոշակի ժամանակահատվածի (օրինակ՝ 10-20 տարիների) վրա:

3.14 Սույն Քաղաքականության շրջանակում ՊՄԳ է համարվում այնպիսի պայմանագիրը, որի շրջանակում տեղի է ունենում ռիսկի երկարաժամկետ բաշխում (որոշ տեսակի) կամ փոխանցում մասնավոր գործընկերոջը:

3.15 ՊՄԳ չի հանդիսանում այնպիսի ծրագիրը, որը բաղկացած է մասնավոր գործընկերոջ կողմից հանրային ծառայություններ չհանդիսացող և (կամ) հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում չընդգրկվող ծառայությունների մատուցումից և չի ներառում հանրային նշանակության ենթակառուցվածքի ապահովում և (կամ) հանրային ծառայությունների մատուցում: Այդպիսի ծրագրի օրինակ է բնական ռեսուրսների հետ կապված կոնցեսիան, օրինակ, բնական ռեսուրսների ուսումնասիրության և արդյունահանման նպատակով: Այն սովորաբար չի դիտարկվում որպես ՊՄԳ, քանի որ վարձատրության ձևը և որոշակի առումով ռիսկերի բաշխման ուղղությունները հաճախ տարբերվում են ՊՄԳ-ների շրջանակներում կիրառվող համապատասխան գործընթացներից:

4. ՊՄԳ ձևաչափի կիրառման նպատակահարմարությունը հիմնավորող գործոններ (փողի դիմաց արժեքի խթաններ)

4.1 Ծրագիրը ՊՄԳ կամ ավանդական պետական գնումների ձևաչափով իրականացնելու մասին որոշում կայացնելիս կան գործոններ, որոնց առկայության դեպքում ՊՄԳ ձևաչափը կարող է առավել հարմար և շահավետ լինել, քան ծրագիրը հանրային հատվածի կողմից իրականացնելը: Այդ գործոնները երբեմն անվանում են փողի դիմաց արժեքի խթաններ:

4.2 Նշված գործոններն անհրաժեշտ է հաշվի առնել ՊՄԳ-ի նախապատրաստման ողջ գործընթացում: Մասնավորապես, դրանք պետք է օգտագործվեն և հաշվի առնվեն նախնական փուլերում, երբ հնարավոր ՊՄԳ ծրագրերի երկար ցանկից առանձնացվում են խոստումնալից ծրագրերը: Այդ գործոնները դերակատարություն ունեն նաև ՊՄԳ ծրագրի պաշտոնական գնահատման գործընթացում (տե՛ս ենթապարբերություն 8.11(գ)):

4.3 Այս գործոններն իրենցից չեն ներկայացնում փոփոխման ոչ ենթակա ստուգացուցակ: Դրանք առավելապես պետք է դիտարկել հետևյալ կերպ. որքան շատ են դրական պատասխանները և որքան ավելի պարզ կիրառելի են դրանք, այնքան ավելի հավանական է (այլ հավասար պայմաններում), որ

ՊՄԳ-ն ավելի նախընտրելի կլինի, քան ծրագիրը հանրային հատվածի կողմից իրականացնելը:

4.4 ՊՄԳ ձևաչափի՝ պետական գնումների ձևաչափի նկատմամբ նախընտրելիությանը նպաստող հիմնական գործոններն են.

(ա) ծրագիրը որպես ՊՄԳ, այլ ոչ որպես հանրային հատվածի ծրագիր դիտարկելը՝ հստակ տնտեսական օգուտներ է բերում Կառավարությանը և ամբողջ տնտեսությանը, կամ ծրագրի կառուցվածքը պետական գնումների ձևով սահմանելն անհնար կամ անիրագործելի է՝ համապատասխան ժամանակահատվածում բյուջետային սահմանափակումների կամ այլ ֆիսկալ մտահոգությունների պատճառով,

(բ) առկա են խնայողությունների կամ արդյունավետության մեծ հնարավորություններ՝ նախագծումը, շինարարությունը, շահագործումն ու պահպանումը (կամ դրանցից որոշները) համախմբելու դեպքում,

(գ) ցանկալի արդյունքները հայտնի են, համաձայնեցված էական շահառուների միջև և կարող են ճշգրիտ սահմանվել, չափվել և մշտադիտարկվել,

(դ) ՊՄԳ պայմանագիրը կարող է մշակվել այնպես, որ հնարավորինս ամբողջական լինի և անճշտությունների տեղիք չտա,

(ե) ծրագրի վրա ազդող ռիսկերը հարաբերականորեն լավ են ընկալվել և կարող են բավարար հստակությամբ բաշխվել, իսկ պայմանագիրը կարող է ներառել մեխանիզմներ, որոնք մեղմացնում են այդ ռիսկերի նյութականացման հետևանքները,

(զ) ոլորտի տեխնոլոգիան և այլ համապատասխան գործոնները բավական կայուն են (այսինքն՝ ամենայն հավանականությամբ անհրաժեշտություն չի առաջանա պայմանագիրը շարունակաբար հարմարեցնելու փոփոխվող միջավայրին),

(է) ենթադրաբար կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում ճկունության անհրաժեշտություն չի լինի և, այդպիսով, երկարաժամկետ պայմանագիրը կգործի առանց պարբերական վերաբանակցման անհրաժեշտության,

(ը) մասնավոր հատվածն ունի անհրաժեշտ մոտեցումը և տեխնիկական ու կառավարչական հմտություններն ու փորձը և, դեպքերի մեծամասնությունում, ծրագրի համար անհրաժեշտ, հասանելի ֆինանսավորումը: Հավանական է, որ տվյալ տեսակի ծրագրի պարագայում մասնավոր հատվածի կատարողականը և նորարարություններն ավելի լավը կլինեն, քան հանրային հատվածինը: Հավանական է մասնավոր ֆինանսավորման ներգրավումը:

(թ) ՊՄԳ-ի մրցույթի շրջանակներում ակնկալվում է ուժեղ մրցակցություն:

5. ՊՄԳ-ների նախագծման և կառուցվածքի սահմանման մոտեցումը

Ընդհանուր սկզբունքները

5.1 5.2 – 5.7 պարբերություններում սահմանվում են որոշ սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ՊՄԳ-ների նախագծման և կառուցվածքի սահմանման ժամանակ:

5.2 ՊՄԳ պայմանագրերը պետք է կազմվեն հնարավորինս «խիստ» և «ամբողջական» ձևով: Սա նշանակում է, որ պարտավորությունները, պարտականությունները, ռիսկերը և չկանխատեսված հանգամանքները պետք է սահմանվեն կամ դրանց անդրադարձ կատարվի բավարար ճշգրտությամբ և մանրամասնությամբ՝ սահմանափակելու կամ նույնիսկ զրոյացնելու ապագայում անվերջ վերաբանակցումների անհրաժեշտության հավանականությունը, երբ պարզ չէ, թե կողմերից մեկն ինչպես պետք է վարվի որոշակի իրավիճակում: Վերաբանակցումը թույլատրվելու է միայն այնպիսի դեպքերում և հանգամանքներում, որոնք այնքան անհավանական են, որ պայմանագրի կնքման ժամանակ դրանց դիտարկումը կողմերի համար ողջամիտ չէր լինի:

5.3 Կատարողականի բնութագրերը պետք է հնարավորինս արտահայտված լինեն կատարողական արդյունքների, այլ ոչ թե՝ աշխատանքների և սարքավորումների ձեռքբերման ձևով՝ պայմանագիրը մշակելիս «ինչ» հարցը հակադրելով «ինչպես» հարցին: Ակտիվների ձեռքբերման հարցը կարելի է հիմնականում թողնել մասնավոր հատվածի հայեցողությանը: ՊՄԳ-ի դեպքում ուշադրությունը պետք է կենտրոնացնել հանրային գործընկերոջ կամ սպառողների կողմից ծառայությունների ստացման, այլ ոչ ակտիվների ձեռքբերման վրա:

5.4 ՊՄԳ պայմանագրում պետք է ներառվեն համապատասխան խրախուսումներ՝ բարձր որակի ծառայությունների մատուցում և փողի դիմաց արժեք ստանալու նպատակով: Ռիսկերի փոխանցումը մասնավոր գործընկերոջը օգտակար է հիմնականում այն դեպքում, երբ դա ավելացնում է մասնավոր գործընկերոջ՝ լավ կատարողական ապահովելու շարժառիթները:

5.5 Մասնավոր գործընկերոջը պարբերական վճարումների կատարումն, ընդհանուր առմամբ, պետք է սկսվի սահմանված ծառայությունների մատուցման, այլ ոչ թե՝ շինարարության մեկնարկից հետո: Մասնավոր գործընկերը սովորաբար պետք է ստանձնի ծառայությունը հասանելի դարձնելու հետ կապված ռիսկը և այդպիսով՝ ըստ էության, բոլոր նախագծային և շինարարական աշխատանքների հետ կապված ռիսկերը:

5.6 ՊՄԳ պայմանագրում պետք է հստակ ներկայացվեն կամ սահմանվեն հանրային, ինչպես նաև մասնավոր գործընկերոջ պարտականությունները:

5.7 Պետք է հստակ սահմանվեն կատարողականի հետ կապված պահանջներ, այդ թվում՝ ծառայության որակի և պահպանման ստանդարտներ, ինչպես նաև դրանց չիրագործման դեպքում կիրառելի համապատասխան պատժամիջոցներ:

Ռիսկերի գնահատումը և բաշխումը

5.8 ՊՄԳ պայմանագրի շրջանակներում ռիսկերը նախ պետք է լավ ձևակերպվեն, այնուհետև հստակ բաշխվեն: Անհրաժեշտ է դիտարկել ռիսկերի ողջ բազմազանությունը, այդ թվում՝ հետևյալ տեսակները. նախագծում, շինարարություն, գործառնական, սպասարկման, հողերի հետ կապված, ֆինանսական, շուկայական, մակրոտնտեսական, քաղաքական, իրավական, հարկային, բնապահպանական, սոցիալական և այլ ռիսկեր, ներառյալ «անհաղթահարելի ուժի ազդեցությունը» և «բացառիկ իրադարձությունները»: Ռիսկերի յուրաքանչյուր խմբում/տեսակում, ծրագիրը նախապատրաստող թիմը պետք է այնուհետև անդրադառնա դրանցից առանցքայիններին՝ վերջիններս մանրամասն ու հստակ նկարագրելով ՊՄԳ պայմանագրում՝ կողմերի համապատասխան պարտականությունների առումով՝ պարզ դարձնելով, թե որ կողմն է դրանք ստանձնում և որոնք են դրանց հետևանքները: Բաշխումը պետք է լինի համաչափ և օպտիմալ ու ՊՄԳ պայմանագրում ներառվի պարտադիր կատարման ենթակա և առևտրային տեսանկյունից կայուն կերպով: Ռիսկերը պետք է փոխանցվեն այն կողմին, որն ունակ է դրանք լավագույնս կառավարել՝ միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդներին համապատասխան:

Վճարման մեխանիզմը

5.9 Վճարման մեխանիզմը սահմանում է մասնավոր գործընկերոջ վարձատրության ձևը:

5.10 Վճարման մեխանիզմը պետք է արտացոլի կատարողականը, ինչպես նաև խրախուսի մասնավոր գործընկերոջ ավելի լավ աշխատանքը (վճարումների ճշգրտումների և/կամ հատուկ լրավճարների/տույժերի կիրառման միջոցով):

5.11 Վճարման մեխանիզմը կարող է լինել մի շարք տեսակների, այդ թվում՝ սպառողներից գանձվող վճարներ (օրինակ՝ ուղղակի ճանապարհային վճար), հանրային գործընկերոջ կողմից կատարվող վճարումներ (օրինակ՝ հասանելիության վճարներ, անուղղակի վճարներ, սուբսիդիաներ) կամ նշված երկուսի համադրությունը: Որոշ դեպքերում կարող է տեղին լինել նաև նվազագույն հասույթի երաշխիքը:

Վաղաժամկետ դադարեցման դիմաց վճարումները

5.12 Հանրային գործընկերոջ կողմից ՊՄԳ պայմանագրի դրույթների խախտման դեպքում վերջինս պարտավորված է լինելու վճարել մասնավոր գործընկերոջը: Հանրային գործընկերոջ կողմից վճարումը կարող է պահանջվել նաև մասնավոր գործընկերոջ կողմից ՊՄԳ պայմանագրի խախտման դեպքում: Դրա հիմնական պատճառն այն է, որ առաջնային վարկատուները ցանկացած դեպքում ձգտելու են ապահովել իրենց կողմից տրամադրված վարկերի գումարի զգալի մասի վերադարձը: Այդպիսով, հանրային գործընկերը, որը ՊՄԳ պայմանագրի դադարեցումից հետո դառնալու է ենթակառուցվածքի սեփականատերը և օգտագործելու է այն, պետք է կատարի վճարում, որը գրեթե համաչափ է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման արդյունքում իր ստացած օգուտներին (հանած խախտման համար նախատեսված համապատասխան տույժերը)՝ «անհիմն հարստացումը» կանխելու նպատակով, նույնիսկ եթե պայմանագրի վաղաժամկետ դադարեցման պատասխանատուն մասնավոր գործընկերն է:

5.13 Վաղաժամկետ դադարեցման դիմաց վճարների հաշվարկման ձևը (դադարեցման տարբեր տեսակների համար, այդ թվում՝ հանրային գործընկերոջ, մասնավոր գործընկերոջ խախտման հետևանքով դադարեցումը, հատուկ և անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերը) պետք է հստակ և մանրամասն սահմանվի ՊՄԳ պայմանագրում կամ առաջնային վարկատուների հետ կնքվող «ուղիղ պայմանագրում»՝ հաճախ համապատասխան զուգահեռ դրույթներ ներառելով ՊՄԳ պայմանագրում: Սա կօգնի խուսափել ավելորդ վեճերից[3]:

---

[3] «Ուղիղ պայմանագիրը» հանրային գործընկերոջ, մասնավոր գործընկերոջ և ֆինանսավորողների միջև կնքվող պայմանագիր է: Առաջնային վարկատուները սովորաբար «ուղիղ պայմանագիր» են կնքում պետությունը (կամ համայնքը՝ համայնքային մակարդակի ՊՄԳ-ների դեպքում) ներկայացնող հանրային գործընկերոջ հետ՝ միջամտության իրավունքը և դրան առնչվող հարաբերությունները նախատեսելու նպատակով: «Ուղիղ պայմանագիրը» սովորաբար ներառում է խախտումները վերացնելու իրավունքները, միջամտության իրավունքները, ծանուցման ժամկետները, փոխարինման իրավունքները, որոնք բոլորն էլ առաջնային վարկատուին այլընտրանքային լուծումներ են տրամադրում ծրագրի վերաբերյալ պայմանագրի (և/կամ ֆինանսավորման փաստաթղթերի) շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից իր պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում, և որոնք փաստացի չեղարկում են պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հանրային գործընկերոջ իրավունքները, որոնք վերջինս կունենար հակառակ դեպքում՝ ՊՄԳ ծրագրի շարունակականությունը և վերջնական հաջողությունն ապահովելու նպատակով: Այն սովորաբար վարկատուներին թույլ է տալիս «միջամտել» ծրագրին ծայրահեղ հանգամանքներում՝ էական պարտավորությունների խախտումը վերացնելու, անհրաժեշտության դեպքում ծրագիրն իրականացնող ընկերությունը վերակազմավորելու և սահմանված պահանջներին համապատասխան ծրագրի գործունեությունը շարունակելու նպատակով: Պարտավորության խախտման վերացման անհնարինության և պայմանագրի դադարեցման դեպքում այն նաև հաստատում է պատվիրատուի կողմից վճարման ենթակա դադարեցման վճարները: Շատ դեպքերում ՊՄԳ-ի համար ֆինանսավորում ստանալն անհնար կլինի առանց առաջնային վարկատուների այս և այլ իրավաչափ մտահոգությունները և շահերն ընդունելու: Օրենսդրությունը պետք է առավելագույնս հստակ սահմանի առաջնային վարկատուների այս առումով տարբեր իրավունքները և, մասնավորապես, նրանց կողմից միջամտության իրավունքների օգտագործումը:

5.14 Նոր օրենքը և ենթաօրենսդրական ակտերը կապահովեն լայն սկզբունքներ, որոնցով կկարգավորվեն նշված վճարների հաշվարկման և վճարման եղանակները: ՊՄԳ ստորաբաժանումը մանրակրկիտ կերպով կուղղորդի պատվիրատուներին՝ առանձին ՊՄԳ պայմանագրերի համար պատշաճ դրույթներ նախատեսելու հարցում նրանց աջակցելու նպատակով:

Մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումները

5.15 Եթե ՊՄԳ պայմանագրով նախատեսված են մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումներ, ապա նման վճարումները պետք է հիմնված լինեն կոնկրետ ծրագրի տնտեսական ասպեկտների վրա, որոնք նախապես որոշվում են ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման և գնահատման ժամանակ օգտագործված ֆինանսական մոդելով: Սրանով չի բացառվում տարբեր ոլորտների կամ ենթաոլորտների տնտեսական ասպեկտների վրա հիմնված ընդգրկուն ուղեցույցների ընդունումը: Դրա հիմնավորումն այն է, որ ՊՄԳ-ի տնտեսական օգուտը պետք է դիտարկել հիմնականում հասարակության համար օգուտների, այլ ոչ հանրային գործընկերոջ անմիջական հասույթի տեսանկյունից:

5.16 Մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը կատարվող վճարումները սովորաբար լինում են երեք հիմնական տեսակի, որոնց մեծությունները որոշվում են հիմնվելով յուրաքանչյուր կոնկրետ ծրագրի տնտեսական ասպեկտների վրա, և որոնք կարող են կիրառվել համակցությամբ.

(ա) ֆիքսված պարբերական վճարում (օրինակ՝ ամսական կամ տարեկան),

(բ) ֆիքսված վճարում՝ վաճառված ապրանքների կամ ծառայությունների միավորի հաշվով (այսինքն՝ արդյունքի թողունակություն հիմնված արտադրողականության վրա),

(գ) հասույթի կամ շահույթի բաշխում:

5.17 Մասնավոր գործընկերոջ կողմից մրցութային հայտում ներկայացված վճարումների չափը կամ բաշխման տոկոսը հաճախ օգտագործվում է որպես մասնավոր գործընկերոջ ընտրության գնահատման չափանիշներից մեկը:

Վեճերի լուծումը

5.18 Միջազգային լավագույն պրակտիկայի համաձայն՝ ՊՄԳ պայմանագրի կողմերը պետք է հնարավորություն ունենան վեճերի լուծումը հանձնելու միջազգային առևտրային արբիտրաժին: Նոր օրենքում կնախատեսվի հնարավորություն՝ վեճերը լուծելու միջազգային արբիտրաժային մարմիններում, որոնք ամբողջապես չեզոք և անկախ են հանրային մարմիններից և այլ կազմակերպություններից և ներկայացվում են փորձառու արբիտրների կողմից: Միջազգային արբիտրաժին դիմելը կողմերին

հնարավորություն կտա օգտվել վարույթի հուսալիությունից և արագությունից և միջազգային արբիտրաժային որոշումների կատարումն ապահովող միջազգային համաձայնագրերից: Դեպքերի մեծամասնությունում այն նաև հանդիսանում է միջազգային վարկատուների հիմնարար պահանջ:

6. Ինստիտուցիոնալ շրջանակը

ՊՄԳ-ների լայն ինստիտուցիոնալ շրջանակը

6.1 Հայաստանում ՊՄԳ պատշաճ ինստիտուցիոնալ շրջանակի մշակումը երկարաժամկետ գործընթաց է լինելու, և Նոր օրենքի ընդունմանը հաջորդող առաջին տարիների ընթացքում նշված շրջանակը, հավանաբար, լինելու է որոշ չափով ավելի պարզ և պակաս բազմակողմանի, քան ստորև նկարագրվածը: Ներգրավված պետական մարմինների և հաստատությունների կողմից ՊՄԳ համակարգի արդյունավետ կառավարումը կարևորագույն նշանակություն ունի այդ համակարգի հաջողության համար: Բոլոր համապատասխան դերակատարությունների և հարաբերությունների սահմանման և մշակման, ինչպես նաև անհրաժեշտ ողջ կարողությունների զարգացումն իրականացնելու համար ժամանակ և մտավոր աշխատանք է պահանջվում: Ստորև բերված պարբերություններում նկարագրվում են լիարժեք զարգացած ինստիտուցիոնալ համակարգի որոշ հիմնարար բաղադրիչներ, որն ակնկալվում է աստիճանաբար ներդնել հետագա մի քանի տարիների ընթացքում: ՊՄԳ համակարգի առաջարկվող ինստիտուցիոնալ կառուցվածքը և համակարգի մասնակիցների կողմից առաջարկվող գործառույթերը ՊՄԳ գործարքների իրականացման հիմնական փուլերում՝ որպես ուղեցույց ներկայացված են Քաղաքականության հավելվածում: Համակարգի մասնակիցների համապատասխան լիազորությունները և գործառույթները կսահմանվեն Նոր օրենքով և (կամ) ենթաօրենսդրական ակտերով:

ՊՄԳ ստորաբաժանումը

6.2 Հայաստանում նոր ինստիտուցիոնալ կարողությունների կենտրոնական բաղադրիչն է հանդիսանալու ՊՄԳ ստորաբաժանումը, որն աջակցելու և ուղղորդելու է ներգրավված բոլոր պետական մարմիններին: Ներկայումս Հայաստանում ՊՄԳ ստորաբաժանման համար անհրաժեշտ հիմնական գործառույթները սահմանված են 6.3 պարբերությունում: Այս գործառույթներից որոշներն արդեն իսկ իրականացվում են ՌՆԿ-ի կողմից, մինչդեռ մնացածը բաշխված են տարբեր գերատեսչությունների միջև (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ոլորտային գերատեսչություններ և այլն): Նշված գործառույթներից որոշները ներկայումս որևէ պետական մարմնի կողմից մշտական հիմունքներով չեն իրականացվում, ինչը ՊՄԳ ստորաբաժանման կարևորագույն դեր ունենալու պատճառներից մեկն է հանդիսանում:

6.3 ՊՄԳ ստորաբաժանման գործառույթները ներառում են

(ա) Աջակցություն Քաղաքականության հետագա մշակմանը՝ այդ թվում.

(Ա) ըստ անհրաժեշտության պարբերական անդրադարձ Քաղաքականությանը,

(Բ) աջակցութուն օրենսդրական և ենթաօրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնման աշխատանքներին,

(Գ) ըստ անհրաժեշտության՝ աջակցություն պիլոտային ՊՄԳ նախագծերի/ՊՄԳ ծրագրերի իրականացման նախապատրաստման աշխատանքներին:

(բ) Աջակցություն Կառավարությանը՝ ընթացակարգերի և մեթոդաբանությունների հետ կապված պարտադիր նորմատիվ ակտերի ներդրման՝ այդ թվում կանոնակարգերի, պարտադիր կատարման ենթակա ուղեցույցների, և մեթոդաբանությունների մշակման և թարմացման ուղղությամբ՝ կապված, օրինակ, տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և գնահատման հետ:

(գ) Աջակցություն/օժանդակություն՝ առանձին ՊՄԳ ծրագրերի գնահատման գործում: Սա վերաբերում է բացառապես պետական մակարդակում իրականացվող ՊՄԳ-ներին և այն համայնքային մակարդակի ՊՄԳ-ներին, որոնցում ներգրավված է ցանկացած տեսակի պետական օժանդակություն:

(դ) Ընդհանուր բնույթի խորհրդատվություն պետական գերատեսչություններին և այլ շահառուներին՝ կանոնակարգերի կիրառման և ՊՄԳ ծրագրերի պատրաստման վերաբերյալ:

(ե) ՊՄԳ-ների և կատարողականի արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, վերլուծություն, տրամադրում և հաշվետվություն (ծրագրի հաշվետվություններ, ՊՄԳ տվյալների բազա, սահմանված առաջնահերթություններով ծրագրի գլխավոր պլան և այլն): Պետական և մասնավոր հատվածների համար տվյալների թափանցիկությունը և հասանելիությունը կենսական նշանակություն են ունենալու:

(զ) ՊՄԳ-ների հետ կապված հարցերով ոչ պարտադիր բնույթի ուղղորդում, այդ թվում՝

(Ա) ոչ պարտադիր բնույթի ուղղորդող նյութերի, լավագույն փորձի վերաբերյալ ամփոփ փաստաթղթերի և այլ նյութերի պատրաստում և տարածում,

(Բ) ՊՄԳ օրինակելի (ոչ պարտադիր) պայմանագրային դրույթների և պայմանագրերի մշակում և տարածում:

(է) Կարողությունների զարգացում, այդ թվում՝ տարբեր տեսակի վերապատրաստման դասընթացների կազմակերպում գերատեսչությունների, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահառուների համար:

(ը) ՊՄԳ-ների ֆինանսավորման առավել արդյունավետ ձևերի մշակում:

Պետական պատվիրատուի պարտականությունները

6.4 Պատվիրատուներն իրենց պարտականությունների շրջանակներում ՊՄԳ-ներ իրականացնող մարմիններն են, որոնք ի վերջո հաշվետու են հանրությանը և կառավարությանը՝ ՊՄԳ-ների շրջանակներում ապահովված ծառայությունների մատուցման և ենթակառուցվածքների համար[4]:

6.5 Պատվիրատուները պետք է ուղղորդում ստանան ՊՄԳ ստորաբաժանման կողմից՝ իրականացման ենթակա ՊՄԳ ծրագրերի նախնական իդենտիֆիկացման գործընթացում և ծրագրերի գաղափարների մշակման հեռանկարային համակարգ ստեղծելու հարցում:

6.6 Խորհրդատվական ընկերությունները կարող են կարևոր դերակատարություն ունենալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացմամբ և որպես գործարքի խորհրդատուներ հանդես գալով: Արտաքին խորհրդատվությունն առանձնահատուկ կարևորություն ունի ՊՄԳ ծրագրի առաջին տարիների ընթացքում՝ մինչև ՊՄԳ ստորաբաժանման և պատվիրատուների կողմից բավարար ներքին կարողությունների զարգացումը՝ ծրագրի նախապատրաստման, գնահատման և մրցույթի անցկացման հետ կապված պարտականությունների որոշ մասն ինքնուրույն իրականացնելու համար: Հավասարապես կարևոր է նաև պատվիրատուների՝ վերահսկողության և մշտադիտարկման կարողությունը:

7. ՊՄԳ ծրագրերի նախապատրաստման փուլերը

7.1 ՊՄԳ-ի «կենսապարբերաշրջանի» հիմնական փուլերն են.

(ա) իդենտիֆիկացիա (այդ թվում՝ ՊՄԳ նախնական հայեցակարգի ձևակերպում և նախնական տեխնիկատնտեսական և այլընտրանքների ուսումնասիրությունների իրականացում՝ կախված հանգամանքներից),

[4] Որոշ դեպքերում պատվիրատուն ընթացիկ պարտականությունները կարող է պատվիրակել մեկ այլ կազմակերպության, օրինակ՝ պետական կամ համայնքային ձեռնարկության, որի դեպքում կարող է տեղին լինել «պատվիրատուի» և «իրականացնող կազմակերպության» տարբերակումը: Պարզության նկատառումներից ելնելով՝ նման որակավորումն ստորև անտեսվում է, և անդրադարձ է կատարվում միայն պատվիրատուներին:

(բ) ՊՄԳ ծրագրի նախնական մշակում և նախագծում, որն ավարտվում է ՊՄԳ տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվության պատրաստմամբ,

(գ) պաշտոնական գնահատում: Հենց այս փուլում է կայացվում, ի թիվ այլոց, ՊՄԳ մոդելի կամ ձևի ընտրության մասին պաշտոնական որոշումը,

(դ) գնումների փուլ (որն առավել մանրամասն նկարագրված է Բաժին 9-ում և հասնում է մինչև պայմանագրի կոմերցիոն բոլոր պայմանների համաձայնեցման փուլը),

(ե) կոմերցիոն պայմանների համաձայնեցում (ՊՄԳ պայմանագրի ստորագրում և կողմերի՝ դրանով նախատեսված պարտավորությունների ծագման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների իրականացման ապահովում),

(զ) ֆինանսական պայմանների համաձայնեցում (ֆինանսական և ապահովման միջոցների տրամադրման հետ կապված բոլոր փաստաթղթերի (ներառյալ՝ ուղիղ պայմանագրի) ստորագրում և կողմերի՝ դրանցով նախատեսված պարտավորությունների ծագման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների իրականացման ապահովում, ինչը հնարավորություն է ստեղծում սկսել ծրագրի ֆինանսավորումը),

(է) ծրագրի իրականացում (նախագծում/(վերա)կառուցում/շահագործում) և մշտադիտարկում ու վերահսկողություն,

(ը) փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատում (ծրագրի հաջողությունների և ձախողումների գնահատում):

8. ՊՄԳ ծրագրի գնահատումը

Ընդհանուր

8.1 Բոլոր ՊՄԳ-ների համար մինչև մրցույթի մեկնարկը, պետք է իրականացնել պաշտոնական գնահատման գործընթաց: Ակնկալվում է, որ ստորև նկարագրված՝ Հայաստանում ՊՄԳ-ների գնահատման ամբողջական համակարգը, պահանջները և չափանիշները, կիրականացվեն միայն աստիճանաբար՝ Նոր օրենքի ընդունումից հետո մի քանի տարիների ընթացքում: Նախնական փուլում՝ Նոր օրենքի ընդունումից անմիջապես հետո, գնահատման ընթացակարգերն, ամենայն հավանականությամբ, լինելու են առավել ճկուն, և դրանց որոշ տարրեր վերապավելու են պատվիրատուի/ՊՄԳ ստորաբաժանման հայեցողությանը:

8.2 ՊՄԳ պայմանագրի ցանկացած փոփոխության դեպքում պետք է իրականացվի դրա շրջանակին, բարդությանը և ազդեցությանը համաչափ գնահատման

գործընթաց: Ոչ էական փոփոխությունների դեպքում վերանայման գործընթացի շրջանակը կարող է նեղացվել՝ դրան տրամադրելով ավելի քիչ ջանք և ժամանակ:

8.3 ՊՄԳ ծրագրի գնահատումը բաղկացած է վերջինիս բոլոր ասպեկտների բազմակողմանի գնահատումից, որը կատարյալ պայմաններում (հնարավորության դեպքում) իրականացվում է այնպիսի կազմակերպության (աշխատախմբի) կողմից, որն ուղղակիորեն ներգրավված չի եղել ծրագրի նախապատրաստման գործընթացում: Սա պայմանավորված է նրանով, որ ծրագրի նախապատրաստմանը ներգրավված խումբն, ամենայն հավանականությամբ, կողմնակալ մոտեցում է ունենալու՝ հակված լինելով ծրագրի հաստատմանը՝ անկախ դրա բոլոր թերություններից:

8.4 Սովորաբար որպես ՊՄԳ-ի գնահատման առանցքային չափանիշ հաշվի է առնվելու փողի դիմաց արժեքը (այսուհետ՝ «ՓԴԱ»): ՓԴԱ-ն վերաբերում է ծառայության ողջ ժամկետի ընթացքում պահանջվող ծախսերի և ծառայության որակի օպտիմալ համադրություն գտնելուն, այսինքն՝ ծրագրի զուտ օգուտներն առավելագույնին հասցնելուն: ՓԴԱ նկարագրված հասկացությունը (որը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է կիրառել մտածված և զգուշորեն) տարբերվում է մեկ այլ էական չափանիշից՝ ծրագրի տնտեսական հիմնավորվածությունից, որով պայմանավորվում է հանրային սեկտորի կողմից ծրագրի իրականացումը ձեռնարկելը կամ ոչ: Ծախսեր-օգուտներ տնտեսական վերլուծությունը էական նշանակություն ունի որոշելիս, թե արդյոք առաջարկվող ծրագիրը զուտ օգուտներ կստեղծի տնտեսության և հասարակության համար: Մյուս կողմից, ՓԴԱ թեստը նպատակ ունի որոշելու, թե արդյոք ՊՄԳ ձևաչափն առավել մեծ զուտ օգուտներ կապահովի, քան նմանատիպ, պատշաճ կազմակերպված պետական գնումների ձևաչափով իրականացվող ծրագիրը: Նկարագրված չափանիշներից երկուսի կիրառումն էլ էական է, սակայն պատասխանում է տարբեր հարցերի:

8.5 ՊՄԳ-ի գնահատման գործընթացի խորության և մանրամասնության աստիճանը պետք է համաչափ լինի ծրագրի արժեքին և կարևորությանը և անխուսափելիորեն կտարբերվի՝ կախված ծրագրից:

8.6 Ազգային ՊՄԳ ծրագրերի դեպքում գնահատումը նախ պետք է իրականացվի պատասխանատու ոլորտային գերատեսչության, իսկ այնուհետև՝ իրավասու համապատասխան պետական մարմնի (անհրաժեշտության դեպքում ՊՄԳ ստորաբաժանման օժանդակությամբ) կողմից: Համայնքային ՊՄԳ ծրագրերի դեպքում գնահատումը պետք է իրականացվի նույն կերպ, ինչ՝ ազգային մակարդակի ծրագրերի դեպքում, այն տարբերությամբ, որ գնահատումն իրականացնող միակ մարմինը տեղական ինքնակառավարման մարմինն է: Եթե ՊՄԳ-ն ներառում է պետական ցանկացած տեսակի աջակցություն, ապա վերջնական գնահատումը պետք է

իրականացվի իրավասու համապատասխան պետական մարմնի (անհրաժեշտության դեպքում ՊՄԳ ստորաբաժանման օժանդակությամբ) կողմից՝ նույնիսկ համայնքային մակարդակի ՊՄԳ-ների դեպքում:

8.7 Եթե գնահատումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմնի, այլ ոչ՝ ՊՄԳ ստորաբաժանման կողմից, ապա գնահատման հաշվետվությունը պետք է ուղարկվի ՊՄԳ ստորաբաժանման ուսումնասիրությանը, քանի որ դա վերջինիս համար համայնքային մակարդակում իրականացվող ծրագրի իրագործելիությանը և գնահատման գործընթացին հետևելու միջոց է հանդիսանում՝ դրա արդյունավետությունը հասկանալու և կանոնակարգերի կամ ծրագրի գնահատման չափանիշների հնարավոր փոփոխությունների համար որպես մուտքային տվյալ օգտագործելու նպատակով:

8.8 Գնահատման համար հիմք են հանդիսանում Տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունը և հիմնավորող փաստաթղթերը (որոնք սովորաբար կազմվում են ՊՄԳ ստորաբաժանման կամ պատվիրատուի կողմից):

8.9 Մինչև ՊՄԳ պայմանագիր կնքելն անհրաժեշտ է բավարար քանակի խորհրդակցություններ անցկացնել շահառուների հետ և ստանալ վերջիններիս աջակցությունը: Հանդիսանալով ՊՄԳ-ի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների հիմնական կենտրոնը, ՊՄԳ ստորաբաժանումը պետք է նաև աշխատանքային հարաբերություններ պահպանի ՊՄԳ-ում ներգրավված բոլոր շահառուների հետ (այդ թվում՝ արտագնա շնորհանդեսների, աշխատաժողովների, կլոր սեղանների միջոցով և այլն): Շահառուների կողմից արդյունավետ կառավարումը կօգնի անհրաժեշտ աջակցություն ապահովել ՊՄԳ-ին՝ դրա նախապատրաստման և իրականացման ընթացքում:

8.10 ՊՄԳ ծրագրի գնահատման հիմնական նպատակն է ապահովել, որ ակնհայտորեն անիրագործելի և ֆիսկալ ու տնտեսական տեսանկյունից անհիմն ՊՄԳ ծրագրեր չհաստատվեն: Նպատակը ո՛չ ՊՄԳ ծրագրերի մանրամասների վերանախագծումն է, ո՛չ էլ պատվիրատուի կողմից կայացված առևտրային կամ գործնական բնույթի որոշումների թեթևակի ճշգրտումները:

8.11 Գնահատման հիմնական չափանիշներն են.

(ա) համապատասխանությունը ազգային պլանավորման նպատակներին և ոլորտային ռազմավարությանը,

(բ) ծրագրի տնտեսական հիմնավորվածությունը և մատուցվելիք ծառայությունների բնույթը և հուսալիությունը,

(գ) ծրագիրը ՊՄԳ ձևաչափով (այլ ոչ հանրային հատվածի կողմից) իրականացնելու նպատակահարմարությունը, այսինքն՝ փողի դիմաց արժեքի խթանները և նմանատիպ չափանիշները (տե՛ս Բաժին 4-ը),

(դ) փողի դիմաց արժեքի որակական և քանակական համեմատություն (օրինակ՝ ՀՀՀԾ վերլուծություն) (բավարար և հուսալի քանակական տվյալների առկայության դեպքում),

(ե) մասնավոր գործընկերոջը, հանրային գործընկերոջը և այլ կողմերին պատասխանատվությունների և ռիսկերի բաշխման պատշաճությունը,

(զ) փողի դիմաց արժեքի և ծառայությունների բարձր որակի ապահովման համար մասնավոր գործընկերոջը տրվող խրախուսումների պատշաճությունը,

(է) անհրաժեշտության դեպքում մասնավոր գործընկերոջ համար ֆինանսական իրագործելիությունը, այդ թվում՝ առաջնային վարկատուների տեսանկյունից («ֆինանսական գրավչություն» (bankability)),

(ը) պետական և համայնքային բյուջեների բավարարությունը, եթե կիրառելի է՝ հաշվի առնելով պետական աջակցության ցանկացած մեխանիզմ,

(թ) ՊՄԳ ծրագրից բխող ոչ պայմանական և պայմանական պարտավորությունների՝ պետության վրա ֆիսկալ ազդեցության ընդունելիությունը,

(ժ) բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ընդունելիությունը,

(ժա) մասնավոր գործընկերոջ ընտրության նպատակով պլանավորված գործընթացի պատշաճությունը (ներառյալ՝ գնահատման չափանիշները),

(ժբ) ծրագրի գործողության ընթացքում պատվիրատուի՝ մշտադիտարկման և վերահսկողության ծրագրի պատշաճությունը,

(ժգ) այլ հնարավոր ծրագրերի համեմատ ՊՄԳ ծրագրի հրատապությունը՝ Կառավարության գերակայությունների տեսանկյունից:

8.12 Գնահատման երկրորդական չափանիշները պետք է սահմանվեն Կառավարության և (կամ) Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից (ՊՄԳ ստորաբաժանման աջակցությամբ)՝ ըստ առանձին ոլորտների, ենթաոլորտների և ծրագրերի տեսակների:

8.13 Բոլոր ՊՄԳ-ները պետք է գնահատվեն նույն ձևով և նույն ընթացակարգերով, չնայած որոշ չափանիշներ կարող են կիրառելի չլինել ՊՄԳ-ի բոլոր տեսակների համար:

8.14 ՊՄԳ-ների հետ կապված որոշումների ընդունման ընթացակարգն իր վերջո սովորաբար ներառում է հետևյալ երեք առանցքային քայլերը.

(ա) ծախսեր-օգուտներ տնտեսական վերլուծությունը՝ գնահատելու՝ արդյոք ծրագիրն արժեք է ներկայացնում տնտեսական և սոցիալական տեսանկյունից,

(բ) ՓԴԱ վերլուծությունը՝ ընտրելու ծրագրի իրականացման եղանակը (ՊՄԳ-ի կամ ավանդական պետական գնումների եղանակով),

(գ) «հաջորդ փուլին անցնելու» գործընթացը ("gateway" process), որում բյուջետային մարմիններին առանցքային դերակատարություն ունեն՝ ֆիսկալ ծախսերի և ռիսկերի ընդունելիությունը գնահատելու, մշտադիտարկելու և կառավարելու առումով:

Ֆիսկալ ազդեցության գնահատումը

8.15 ՊՄԳ-ները կարող են ներառել ոչ պայմանական և պայմանական պարտավորություններ պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար.

(ա) ոչ պայմանական պարտավորության (որը երբեմն կոչվում է նաև «ուղղակի») օրինակ է, երբ մասնավոր գործընկերոջ վարձատրությունն ամբողջությամբ կամ մասնակի տրվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեից վճարվող եկամուտների հոսքի հաշվին (ինչի համար նախապայման է հանդիսանում միայն ծառայությունների մատուցումը՝ այսպես կոչված «հասանելիությունը»),

(բ) «պայմանական պարտավորության» դեպքում վճարումը կատարվում է միայն սահմանված պայմաններում, որոնք կարող են առաջանալ կամ չառաջանալ, օրինակ. նվազագույն հասույթի երաշխիք (օրինակ՝ վճարովի ճանապարհի դեպքում) կամ մասնավոր գործընկերոջը կատարվող վաղաժամկետ դադարեցման վճարումներ:

8.16 Այս պարտավորությունները կարող են փոքրացնել պետության ֆիսկալ հնարավորությունները (fiscal space) նույն ձևով, ինչ՝ պետական պարտքի ներգրավումը: Նույնիսկ եթե ՊՄԳ-ի մասնավոր գործընկերոջ պարտքը չի գրանցվում պետության հաշվեկշռում, այն կարող է փոքրացնել պետության ֆիսկալ հնարավորությունները: Կարևոր է, որ ՊՄԳ-ները չվտանգեն պետության երկարաժամկետ ֆիսկալ կայունությունը: ՊՄԳ Տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունում պետք է սահմանվեն (անհրաժեշտության դեպքում՝ ըստ տարիների) բոլոր այն ուղղակի և անուղղակի ազդեցությունների արժեքները, որոնք ՊՄԳ ծրագիրն ունենալու է պետական և համայնքային բյուջեների մուտքային և ելքային հոսքերի վրա: Կախված կոնկրետ ՊՄԳ ծրագրից, պարտադիր ցույց տրվող հոսքերը, ի թիվս այլոց, կարող են ներառել.

(ա) ՊՄԳ պայմանագրի (կամ դրա հետ կապված այլ պայմանագրերի) դրույթների համաձայն մասնավոր գործընկերոջ հանդեպ պետության

կամ տեղական ինքնակառավարման մարմնի ուղղակի պարտավորությունները՝ հիմնված ծառայությունների հասանելիության կամ մատուցման վրա,

(բ) ՊՄԳ պայմանագրի դրույթներով նախատեսված՝ վճարման պայմանական պարտավորությունները,

(գ) մասնավոր գործընկերոջ կողմից պետությանը կամ համայնքապետարանին վճարվող վճարները և հարկերը:

8.17 ՀՀ ֆինանսների նախարարության առաջադրանքը ֆիսկալ ազդեցության գնահատմանն անդրադառնալն է: ՀՀ ֆինանսների նախարարության առաջադրանքն է լինելու նաև մասնավոր գործընկերոջը կատարվող վճարների բյուջետավորումը և օրենքով իրեն վերապահված լիազորությունների հետ առնչվող այլ պարտականությունների կատարումը:

9. Մասնավոր գործընկերոջ ընտրությունը

ՊՄԳ գործընթացը Հայաստանում

9.1 Անհրաժեշտ է, որ Հայաստանում ՊՄԳ քաղաքականությունը համապատասխանի Նոր օրենքին: «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքով սահմանված ընթացակարգերը չպետք է կիրառվեն (նկատի ունենալով, սակայն, որ այդպիսի ընթացակարգերի որոշակի ասպեկտներ կարող են վերցվել՝ պայմանով որ դրանք չեն հակասի մասնավոր գործընկերների ընտրության նպատակներին), իսկ մասնավոր գործընկերոջ ընտրությունը պետք է արտացոլի ՊՄԳ-ի առանձնահատկությունները և ավելի մեծ ճկունության հնարավորություն ստեղծի, ինչպես թելադրում է միջազգային լավագույն փորձը:

9.2 9.4 - 9.11 պարբերություններում նկարագրվում են Հայաստանում ՊՄԳ շրջանակներում մասնավոր գործընկերոջ ընտրության նախընտրելի քաղաքականության որոշ կարևոր դրույթներ: Այդ քաղաքականությունը պետք է ուղղորդի հետագա օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակումը:

9.3 Ակնկալվում է, որ կընդունվեն ենթաօրենսդրական ակտեր և ոչ պարտադիր ուղեցույցներ, որոնք կօգնեն պատվիրատուներին՝ ՊՄԳ ընթացակարգերն ամենապատշաճ ձևով կիրառելու գործում: Ավելին, առանձին ծրագրի առանձնահատկությունները հաշվի առնող, մրցույթի անցկացման համարժեք և պատշաճ պլանի առկայությունը (որը համապատասխանում է օրենքին, սակայն ավելի մանրամասնեցված է, քան սահմանվում է իրավական պահանջներով) հանդիսանալու է ՊՄԳ ծրագրի՝ նախքան հաստատումը

գնահատման գործընթացում ՊՄԳ ստորաբաժանման կողմից օգտագործվող չափանիշներից մեկը:

9.4 ***Մրցույթի մասին ծանուցում:*** Մրցույթի պաշտոնական ընթացակարգը սկսվում է դրա մասին հայտարարության հրապարակմամբ: Հաջորդ քայլի համար բոլոր հետաքրքրված կողմերը կարող են դիմել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը:

9.5 ***Նախարակավորում և նախարակավորված մասնակիցների ցանկի կազմում:*** Նախարակավորման ընթացակարգի նպատակն է գործընթացում ընդգրկել միայն այն հայտատուներին, որոնք ունեն ՊՄԳ-ն պատշաճ կերպով իրականացնելու տեխնիկական, առևտրային (կոմերցիոն) և ֆինանսական հնարավորություններ և հստակ մտադրություն: Նախարակավորման ընթացակարգին մասնակցելու հրավերը (կամ դրա համարժեք փաստաթուղթը) պետք է ներառի նախարակավորման հայտի գնահատման նախարակավորված մասնակիցների ցանկի կազմման գործընթացում օգտագործվող չափանիշները և թեստերը: Այլ նկատառումներից են.

(ա) նախարակավորման չափանիշները չպետք է հանգեցնեն որոշ պոտենցիալ հայտատուների մասնակցության համար չհիմնավորված խոչընդոտների,

(բ) նախարակավորման փաստաթղթերը պետք է ներառեն ծրագրի պատշաճ նկարագրություն, որը կգրավի այն ընկերություններին, որոնք հետաքրքրություն կցուցաբերեին մրցույթի ամբողջական հրավերը տեսնելիս, ինչպես նաև չի մտափոխի այն ընկերություններին, որոնք մրցույթի ամբողջական հրավերը տեսնելիս հայտ ներկայացնելու ցանկություն կունենային,

(գ) որոշ հանգամանքներում կարող է կիրառվել բաց մրցույթ (այսինքն՝ առանց նախարակավորման ընթացակարգի, որի դեպքում որակավորման գնահատումն իրականացվում է մրցութային հայտի գնահատմանը զուգահեռ), սակայն նման դեպքերը անհրաժեշտ է սահմանափակել, քանի որ բոլոր կողմերն էլ միտված են օգուտներ քաղել երկու (կամ ավելի) փուլերով գործընթացի արդյունավետությունից, ճշգրտությունից և արդարությունից,

(դ) մրցույթն ըստ նախատեսվածի շարունակելու համար անհրաժեշտ են նախարակավորումն անցած առնվազն երկու թեկնածուներ: Այն դեպքում, երբ նախարակավորման փուլում հայտ է ներկայացնում միայն մեկ մասնակից, հանրային գործընկերը վերջինիս հետ ուղղակի բանակցություններ է վարում ՊՄԳ պայմանագիր կնքելու նպատակով:

9.6 ***Հայտերի ներկայացման հրավերը:*** Հայտերի ներկայացման հրավերում ներառվող փաստաթղթերը («մրցութային փաստաթղթեր») պետք է պարունակեն այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ կլինի հայտատուներին՝ հայտ ներկայացնելու համար (համաձայնեցված 9.13 – 9.14 պարբերություններում նշված երկխոսության արդյունքում): Կարևոր է բավարար ժամանակ և ջանքեր հատկացնել մրցութային փաստաթղթերը բավականաչափ մանրամասնությամբ մշակելուն՝ հայտերի համեմատելիությունն ապահովելու և նախքան պայմանագրի ստորագրումը վեճերի և պարզաբանումների անհրաժեշտությունը նվազեցնելու նպատակով: Հայտերի ներկայացման հրավերում սովորաբար ներառվում է նաև ՊՄԳ պայմանագրի նախագիծը, և հստակ նշվում են այն բոլոր հարցերը, որոնց մասով դեռևս պետք է որոշում կայացվի (հիմնվելով երկխոսության կամ մրցութային գործընթացի վերջնական արդյունքների վրա): Կարևոր է ընդգծել ՊՄԳ պայմանագրի այն դրույթները, որոնք բանակցությունների ընթացքում փոփոխման ենթակա չեն:

9.7 Հայտերի ներկայացման հրավերում պետք է հստակ սահմանվեն այն ընդհանուր չափանիշները, որոնք կիրառվելու են առաջարկների գնահատման նպատակով, ինչպես նաև յուրաքանչյուր չափանիշին տրվող հարաբերական կշիռը (կամ կարևորության որևէ ցուցանիշ):

9.8 Հայտերի ներկայացման հրավերը պետք է հստակ ցույց տա հայտատուներին, որ իրականացվելու է թափանցիկ, կանոնների վրա հիմնած որոշումների կայացման գործընթաց, որը սահմանափակելու է հայեցողական որոշումների կայացումը և ապահովելու է հավասար և ոչ խտրական վերաբերմունք: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել բոլոր քայլերը և ընթացակարգերը, սովորաբար ավելի մեծ մանրամասնությամբ և ճշգրտությամբ, քան պահանջվում է օրենքներով և կանոնակարգերով: ՊՄԳ գնահատման գործընթացում ՊՄԳ ստորաբաժանումն ուսումնասիրելու է դրանց պատշաճությունը:

9.9 ***Մրցույթի ժամանակահատվածը:*** Ավանդական պետական գնումների դեպքում, հայտերի ներկայացման ժամանակահատվածում պատվիրատուի հիմնական գործունեությունը մրցութային փաստաթղթերի պարզաբանման վերաբերյալ դիմումներին պատասխանելն է: Ինչպես արդեն նշվել է, ՊՄԳ-ների շրջանակներում հաճախ անհրաժեշտ է ավելի լայնածավալ և ինտերակտիվ երկխոսություն՝ հաշվի առնելով ՊՄԳ ծրագրերի համեմատական բարդությունը: Հայտերի ներկայացման ժամանակահատվածում կարող է տեղի ունենալ զգալի երկխոսություն: Այս կարևոր հարցին անդրադարձ է կատարվում սույն փաստաթղթի առանձին բաժնում (տե՛ս 9.12 – 9.14 պարբերությունները):

9.10 ***Վերջնական առաջարկների գնահատումը և նախընտրելի հայտատուի ընտրությունը:*** Այս ընթացքում, մրցութային հանձնաժողովները պետք է ուշադիր և մանրամասն արձանագրեն առաջարկների՝ իրենց կողմից

կատարվող գնահատումը, այդ թվում՝ իրականացված քայլերը: Արձանագրությունը պետք է հստակ արտացոլի գնահատողների կողմից կիրառված որոշումների կայացման մեթոդները և նրանց բոլոր որոշումների հիմնավորումը:

9.11 ***Եզրափակիչ բանակցությունները:*** ՊՄԳ-ների շրջանակներում նախընտրելի հայտատուի ընտրությունից հետո հաճախ պահանջվում են եզրափակիչ բանակցություններ՝ ստորագրման ենթակա վերջնական պայմանագիրը ստանալու նպատակով: Այդ դեպքում, եզրափակիչ բանակցությունների արդյունքում պայմանագրի նախագծում (մրցութային փաստաթղթերում ներառված նախագծում) չի կարող կատարվել այնպիսի փոփոխություն, որը *մինչև* հայտերի ներկայացումը պայմանագրի նախագծում ներառելը կարող էր փոխել հայտատուների դասակարգումը: Նման փոփոխության կատարումը կարող է խեղաթյուրել մրցույթի վերջնական արդյունքը: Հետևապես մրցութային փաստաթղթերում նախկինում ընդգծված դրույթները փոփոխման ենթակա չեն: Կարող են փոփոխվել այլ դրույթներ՝ ՊՄԳ պայմանագիրը կոնկրետ հայտատուին և շուկայի (օրինակ՝ փողի շուկայի) գործող պայմաններին հարմարեցնելու նպատակով:

Հայտատուների հետ փոխգործակցությունը հայտերի ներկայացման ժամանակահատվածում

9.12 Հաշվի առնելով ՊՄԳ-ների բարդությունը՝ հայտերի ներկայացման ժամանակահատվածում հայտատուների հետ առավել ակտիվ փոխգործակցությունը (սովորական պետական գնումների համեմատ) կարող է օգտակար լինել լավագույն լուծումը ստանալու գործում: Պատվիրատուները կարող են փոխգործակցել հայտատուների հետ ՊՄԳ գործընթացի ցանկացած փուլում, օրինակ՝ բաց լսումների, խորհրդակցությունների անցկացման, երկխոսության և երկխոսության մրցակցային ընթացակարգերի իրականացման միջոցով:

9.13 Երկխոսության ընթացակարգն ունի որոշակի սահմանափակումներ.

(ա) նախաորակավորմանը և կարճ ցանկի կազմմանը հաջորդող երկխոսության ընթացակարգը կազմված է հստակ առանձնացված երկու փուլերից,

(բ) առաջին փուլում, պատվիրատուն պահանջում է ամբողջական կամ մասնակի առաջարկներ՝ հիմնված հայտատուներին տրված բնութագրերի, պահանջների և հարցերի վրա: Այս փուլում ֆինանսական առաջարկներ չեն ներկայացվում: Հայտատուներին տրամադրվող տեղեկատվությունը կարող է ներառել տարբեր այլընտրանքներ՝ վերջիններիս կողմից դիտարկման նպատակով: Պարտադիր չէ, որ նախատեսված երկխոսությունը վերաբերի ծրագրի բոլոր տարրերին: Օրինակ, առաջին փուլում հայտատուներից կարող է պահանջվել ներկայացնել միայն ՊՄԳ պայմանագրի նախագծի մասով իրենց դիտողությունները և ցանկալի

փոփոխությունները: Առաջին փուլում կարող են քննարկվել նաև որոշակի ընդհանուր տեխնիկական այլընտրանքներ՝ դրանք ավելի նեղացնելու նպատակով: Սա կախված է կոնկրետ ծրագրից,

(գ) գործընթացը կարող է իրականացվել երկրորդ անգամ, եթե դա նպատակահարմար լինի (և եթե դա ի սկզբանե նախատեսված է մրցութային փաստաթղթերում),

(դ) երկխոսության փուլերի արդյունքում որևէ հայտատու դիտարկումից դուրս չի կարող մնալ,

(ե) այնուհետև պատվիրատուն հաստատում է վերջնական բնութագրերն ու պահանջները, և հայտատուները ներկայացնում են վերջնական տեխնիկական և ֆինանսական առաջարկները:

9.14 Երկխոսության ընդհանուր կանոնները ներառում են հետևյալը.

(ա) բոլոր հայտատուներին պետք է ցուցաբերվի հավասար մոտեցում. մեկ հայտատուին տրամադրվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի բոլոր հայտատուներին,

(բ) առաջին (նաև երկրորդ՝ եռափուլ մրցույթի դեպքում) փուլում հայտատուների կողմից փաստաթղթերի ներկայացումից հետո տեղի ունեցող երկխոսության շրջանակներում կարող են անցկացվել առանձին հանդիպումներ յուրաքանչյուր հայտատուի հետ, եթե դա համարվի օգտակար: Այդ գործընթացին անհրաժեշտ է չափազանց զգուշությամբ վերաբերվել՝ բոլոր հայտատուների նկատմամբ հավասար վերաբերմունքը պահպանելու առումով,

(գ) մրցութային հանձնաժողովը պետք է հստակ, կազմակերպված և ամբողջական կերպով արձանագրի ուղարկված և ստացված բոլոր հաղորդակցությունները և հանդիպումները, ինչպես նաև մասնավոր գործընկերոջ ընտրության առնչությամբ ընդունված բոլոր որոշումները: Ընդունված բոլոր որոշումների համար պետք է հստակ ձևակերպվեն դրանց բացատրությունները և հիմնավորումները,

(դ) առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել յուրաքանչյուր հայտատուի՝ առևտրային գաղտնի տեղեկատվության և մտավոր սեփականության պաշտպանությանը,

(ե) քայլերը պետք է հստակ սահմանվեն նախնական մրցութային փաստաթղթերում և չենթարկվեն փոփոխությունների մրցույթի գործընթացի մեկնարկից հետո:

Մեկ աղբյուրի հետ (ուղղակի) բանակցությունները

9.15 Մեկ աղբյուրի հետ (ուղղակի) բանակցությունները՝ մասնավոր գործընկերոջ արտամրցութային կարգով ընտրության նպատակով, պետք է թույլատրվեն

միայն սահմանված որոշակի հանգամանքներում, օրինակ՝ եթե պատվիրատուի պահանջներին կարող է բավարարել միայն մեկ պոտենցիալ մասնավոր գործընկեր, կամ սեփական նախաձեռնությամբ առաջարկի ներկայացման դեպքում, եթե վերջինիս ներկայացումից հետո որոշակի ժամանակահատվածում[5] ծրագիրը նախաձեռնողից բացի այլ կողմեր ծրագրի նկատմամբ հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Սեփական նախաձեռնությամբ ներկայացվող առաջարկները

9.16 Սեփական նախաձեռնությամբ ՊՄԳ առաջարկներ են համարվում մասնավոր գործընկերոջ կողմից իր նախաձեռնությամբ, այլ ոչ ի պատասխան հանրային գործընկերոջ կողմից իրականացված հարցմանը ներկայացվող (ՊՄԳ ծրագիր իրականացնելու վերաբերյալ) առաջարկները: Սեփական նախաձեռնությամբ ՊՄԳ առաջարկների ռեժիմը կարող է նպաստել ՊՄԳ ծրագրերի իրականացման այնպիսի գաղափարներն ընդլայնելուն, որոնք կարող են ընդգրկվել ՊՄԳ գործարքների հոսքում: Սա գլխավորապես վերաբերում է այնպիսի ծրագրերին, որոնք ներառում են նոր հայեցակարգեր կամ տեխնոլոգիաներ և չեն մտնում նախապատվություն հանդիսացող ծրագրերի ցանկի մեջ հանրային ոլորտում համապատասխան փորձառության պակասի պատճառով: Այնուամենայնիվ, սեփական նախաձեռնությամբ առաջարկները կարող են ստեղծել նաև մարտահրավերներ, որոնք պարունակում են փողի դիմաց անբավարար արժեքի ստեղծման ռիսկեր, մասնավորապես, եթե հանրային գործընկերը նախընտրում է ՊՄԳ գործարք բանակցել անմիջականորեն ծրագիրը նախաձեռնողի հետ՝ բացառելով մրցակցությունը, ինչպես նաև ֆինանսական փոքրածավալ ռեսուրսներն ուղղել իրենցից առաջնահերթություն չներկայացնող ծրագրերի իրականացմանը: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել համապատասխան ընթացակարգերի առավելագույն թափանցիկությունը: Սեփական նախաձեռնությամբ ՊՄԳ առաջարկները պետք է ներկայացվեն այնպիսի անձի կողմից, որը համապատասխանում է որպես մասնավոր գործընկեր որակավորման պահանջներին: Քանի որ այս առումով առկա են ռիսկեր հանրային կողմի համար[6], Նոր օրենքով պետք է սահմանվեն սեփական նախաձեռնությամբ առաջարկ ներկայացնող մասնավոր ներդրողին ներկայացվող այլ պահանջներ, ինչպիսին են՝ տեխնիկական գիտելիքները և որակավորումները, առաջարկի հիմքում ընկած ներդրումների և ռեսուրսների մակարդակը, վճարունակությունը, ֆինանսական կայունությունը, հավանաբար նաև ֆինանսավորումն ապահովելու հնարավորությունը հիմնավորելու հետ կապված պահանջները: Նոր օրենքով պետք է սահմանվի նաև սեփական նախաձեռնությամբ

[5] Ենթակա է սահմանման Նոր օրենքում:

[6] Օրինակ, մասնավոր ներդրողը կարող է ծրագրի կառուցվածքը (ներառյալ փողի դիմաց արժեքը) տեխնիկական, իրավական կամ ֆինանսական տեսանկյունից պատշաճ սահմանելու համար բավարար փորձ չունենալ: Բացի այդ, հեշտությամբ կորչում է ծախսային արդյունավետությունը, իսկ կոռուպցիայի ռիսկն իրական մտահոգություն է:

ներկայացվող առաջարկներն ընդունող լիազոր մարմինը, այդ առաջարկների դիտարկման ընթացակարգերը և պայմանները, ինչպես նաև մանրամասն կարգավորվի այդ կապակցությամբ որոշումների կայացման գործընթացը: Սա ապահովում է արդար մրցակցություն, քանի որ հետաքրքված ցանկացած այլ ներդրող կարող է դիմել՝ ստանալու ծրագրի իրականացման հայտ ներկայացնելու հնարավորություն: Նշված ընթացակարգերը պետք է մշակվեն մասնավոր նախաձեռնողներին (տարբեր աստիճանի) խթաններ տրամադրելու համար՝ բարձր որակի ՊՄԳ ծրագրեր ներկայացնելու և ցածր որակի առաջարկներից խուսափելու, ինչպես նաև մրացկցային լարվածություն ստեղծելու և թափանցիկությունը խթանելու նպատակով:

9.17 Սեփական նախաձեռնությամբ ներկայացվող առաջարկների համար հավասարակշռված կարգավորումներ նախատեսելու նպատակով ընդհանուր առմամբ Հայաստանում կիրառվող քաղաքականությունը պետք է լինի այնպիսին, որ սեփական նախաձեռնությամբ ներկայացվող ՊՄԳ առաջարկները (բացառությամբ այն առաջարկների, որոնց համար կիրառելի է 9.15 պարբերությունը) դրվեն մրցույթի, իսկ ծրագրի նախաձեռնողին մրցութային փուլում տրվեն որոշակի բոնուսներ կամ խրախուսումներ (ինչպիսին են՝ «լավագույն և վերջնական առաջարկի» ներկայացման իրավունքը կամ հայտի բոնուսային միավորները կամ հայտի ապահովում ներկայացնելու պահանջից ազատումը): Եթե ծրագրի նախաձեռնողը պարտվում է մրցույթում, ապա հաղթող հայտատուն պետք է փոխհատուցի նախաձեռնողի՝ սեփական նախաձեռնությամբ ներկայացվող առաջարկի պատրաստման համար կրած ողջամիտ ծախսերը:

Մասնավոր գործընկերոջ կողմից աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը

9.18 Եթե մասնավոր գործընկերոջ կողմից ձեռքբերվող աշխատանքները, ապրանքները կամ ծառայությունները հանդիսանում են ՊՄԳ ծրագրի մաս, որն անցել է մրցութային փուլով, ապա այդ գնումները կատարելիս մասնավոր գործընկերը պարտավոր չէ հետևել պետական գնումների կանոններին, բացառությամբ եթե մասնավոր գործընկերոջ գործունեությունը ենթակա է պետական գնումների ռեժիմին՝ ընկերությունում պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ուղղակի կամ անուղղակի սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս բաժնեմասնակցության պատճառով: Ներկայումս պետական գնումների ռեժիմը կիրառվում է նաև հանրային որոշակի ծառայությունների ցանկում ընդգրկված մեկ կամ մի քանի ծառայությունների նկատմամբ (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն, ոռոգում, էլեկտրոնային հաղորդակցություն), սակայն Նոր օրենքով պետք է բացառություններ նախատեսվեն նման գնումների համար, եթե վերջիններս իրականացվում են ՊՄԳ շրջանակներում:

10. Պետական ֆինանսավորումը և աջակցությունը

10.1 Որոշակի հանգամանքներում թույլատրվելու են պետական աջակցության հետևյալ տեսակները: Հանրային գործընկերը.

(ա) պետք է որպես կանոն ՊՄԳ ծրագրի իրականացման տեղամասը հասանելի դարձնի մասնավոր գործընկերոջ համար, ինչը հաճախ իրականացվում է վարձակալության կամ օգտագործման իրավունքի տրամադրման ձևով՝ ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,

(բ) կարող է տրամադրել նախագծային փաստաթղթեր, ենթակառուցվածքներ կամ գույք, որոնք լրացնում են այն ենթակառուցվածքը, որի համար պատասխանատու է մասնավոր գործընկերը, և (կամ) թույլատրել «օժանդակ օբյեկտների» (հիմնական ենթակառուցվածքը լրացնող կոմերցիոն բնույթի բարելավումներ) կառուցումը,

(գ) մասնավոր գործընկերոջը կարող է տրամադրել շինարարության նպատակով դրամաշնորհներ (շինարարության փուլում պետական համաֆինանսավորում) / սուբսիդիաներ,

(դ) կարող է տրամադրել հարկային և մաքսային արտոնություններ (կամ երաշխիքներ առ այն, որ հարկային ռեժիմը չի փոփոխվի որոշակի ժամանակահատվածում), եթե դա համահունչ է մասնավոր ներդրումների խթանման նպատակով հարկային և մաքսային արտոնությունների տրամադրման ընդհանուր քաղաքականությանը և գործող օրենսդրությանը,

(ե) որոշակի հանգամանքներում կարող է մասնավոր գործընկերոջը տրամադրել պարբերական բնույթի դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ, եթե դա անհրաժեշտ է սպառողների կողմից տրվող վճարների մատչելիությունն ապահովելու նպատակով: Դրանք համապատասխան չեն տրամադրվելու, այլ հիմնված են լինելու նախապես համաձայնեցված կանոնների կամ բանաձևերի վրա (այդպիսի դրամաշնորհները կամ սուբսիդիաները կարող են կոչվել ներդրումային վճարներ կամ գործառնական վճարներ),

(զ) կարող է համաձայնվել որոշակի ձևերով պաշտպանել ծրագիրը հնարավոր մրցակցությունից՝ առնվազն որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝

ա) որոշակի ժամանակահատվածում որոշակի տեսակի տնտեսական գործունեություն իրականացնելու բացառիկ իրավունքներ,

բ) երաշխիքներ, որ այն դեպքում, երբ հանրային գործընկերը համանման իրավունքներ է տրամադրում այլ անձի կամ կառուցվում է համանման ենթակառուցվածք, ինչը հանգեցնում է մասնավոր գործընկերոջ հետ մրցակցության առաջացման, հանրային

գործընկերը մասնավոր գործընկերոջը կփոխհատուցի կորցրած օգուտները,

գ) երաշխիքներ, որ հանրային գործընկերը մասնավոր գործընկերոջից կգնի որոշակի ծավալի ապրանքներ կամ ծառայություններ՝ գնումների մասին օրենսդրության համապատասխան,

դ) հնարավոր մրցակցությունից՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված կամ բացառիկ իրավունքներին չհակասող պաշտպանության այլ տեսակներ:

(է) ՊՄԳ պայմանագրի շրջանակներում կարող է մասնավոր գործընկերոջը պարբերական (ինչպիսին են հասանելիության վճարները, որոնք ներդրողի ծախսերի ծածկման, ինչպես նաև ներդրված կապիտալի հետ վերադարձի և շահույթի ստացման հնարավորություն են տալիս) և սահմանված դեպքերում՝ որպես ռիսկերի բաշխման ձև միանգամյա (օրինակ՝ վճարովի ավտոճանապարհի դեպքում նվազագույն երթևեկության ծավալի կամ հասույթի կամ արտարժույթի փոխարժեքի հետ կապված ռիսկի մասով երաշխիքը) վճարումներ կատարելու պարտավորություն ստանձնել,

(ը) կարող է տրամադրել երաշխիք՝ ՊՄԳ-ի կողմ հանդիսացող պետական ձեռնարկության կոնկրետ վճարային պարտավորությունների (պայմանական կամ ոչ պայմանական), օրինակ, վաղաժամկետ դադարեցման դիմաց վճարումների մասով, հատկապես պիլոտային ՊՄԳ-ների դեպքում, որոնք կարող են ֆինանսական առումով լիարժեք գրավիչ չլինել մասնավոր հատվածի համար:

(թ) կարող է տրամադրել պետական վարկեր կամ որոշակի հանգամանքներում (օրինակ՝ ՊՄԳ-ի մշակման նախնական փուլերում կամ բացառիկ ծրագրերում, որոնք այլապես չէին կարող ֆինանսավորվել) երաշխավորել մասնավոր գործընկերոջ՝ առաջնահերթ մարման ենթակա պարտքը (կամ դրա մի մասը):

10.2 Հայաստանում ՊՄԳ-ների մասով ավելի մեծ փորձառության ձեռքբերումից և ՊՄԳ շուկայի հասունացումից հետո պետությունը կարող է աստիճանաբար սահմանափակել առանձին ՊՄԳ ծրագրերին տրամադրվող աջակցությունը, քանի որ շահառուներն առավել հաճախ կկարողանան հենվել գործնականում հաջողված գոյություն ունեցող օրինակների վրա:

11. Պայմանագրի մշտադիտարկումը, վերահսկողությունը, հաշվետվությունը և գնահատումը

Մշտադիտարկումը և վերահսկողությունը

11.1 Պատվիրատուն հանրության և կառավարության առջև վերջնական պատասխանատվություն է կրում ծառայությունների մատուցման համար՝ նույնիսկ ՊՄԳ պայմանագրի կնքումից հետո: Պահանջվում է, որ պատվիրատուն ունենա անհրաժեշտ կարողություններ՝ ՊՄԳ պայմանագրերի վերահսկողության և մշտադիտարկման համար:

11.2 Ներդրվելու են կանոնավոր մշտադիտարկման համակարգեր, որպեսզի գնահատվի՝ արդյոք մասնավոր գործընկերոջ կատարողականը համապատասխանում է յուրաքանչյուր ՊՄԳ պայմանագրով սահմանված պահանջներին: Սա չպետք է իրականացվի կամայական կերպով:

Թափանցիկությունը

11.3 Ստորագրված բոլոր ՊՄԳ պայմանագրերը պետք է հասանելի լինեն հասարակությանը՝ հաշվի առնելով ազգային անվտանգության պաշտպանության ողջամիտ երաշխիքները և պայմանագրերի տեքստերը ենթարկելով պատշաճ խմբագրման՝ առևտրային բնույթի զգայուն տեղեկատվությունը պաշտպանելու նպատակով:

ՊՄԳ-ների վերաբերյալ տվյալները

11.4 ՊՄԳ ստորաբաժանումը պետք է պահպանի բոլոր ՊՄԳ ծրագրերի համակարգված և արդյունավետ կազմակերպված տվյալների բազա: Դրանում ներառված տեղեկատվությունը պետք է օժանդակի գործընթացի թափանցիկությանը և Կառավարությանը հնարավորություն տա հետևելու իր ֆիսկալ պարտավորություններին: Քաղաքականության պարբերություն 6.3.ե պարբերությունում նկարագրված են տվյալների այն տեսակները, որոնք սովորաբար հավաքագրում են ՊՄԳ ստորաբաժանումները:

11.5 Բոլոր ՊՄԳ-ներին պետք է ներկայացվեն կատարողականի մասին հաշվետվության ստանդարտ պահանջներ՝ տարատեսակ հիմնական ցուցանիշներ: Կատարողականի մասին հաշվետվությանը ներկայացվող պահանջներով պետք է մանրամասնվեն չափման ենթակա վերջնարդյունքները, ծառայության պահանջվող ստանդարտները, չափման համակարգերն, ինչպես նաև կատարողականի հետ կապված նպատակների չիրագործման հետևանքները մասնավոր գործընկերոջ համար: Մշակման փուլում և իրականացման ընթացքում գտնվող բոլոր ՊՄԳ-ների համար պետք է պատրաստվեն և կենտրոնացված կերպով գրանցվեն ու վերլուծվեն ստանդարտ ձևաչափի պարբերական հաշվետվություններ:

11.6 Բոլոր ՊՄԳ պայմանագրերում պետք է ներառվի կատարողականի վերաբերյալ պատվիրատուին հաշվետվության ներկայացման պահանջի հետ համապատասխանության պարտականությունը, քանի որ այդպիսի պահանջները կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել (ընդ որում՝ եթե փոփոխություններն իրավական պարտավորություն չեն առաջացնում, ապա մասնավոր գործընկերոջ համար լրացուցիչ փոխհատուցում չի նախատեսվում, իսկ հակառակ դեպքում փոխհատուցումը նախատեսվում է օրենքի փոփոխությանը վերաբերող դրույթներին համապատասխան):

Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատումը

11.7 Յուրաքանչյուր ՊՄԳ-ի ավարտից հետո պետք է իրականացվի փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատում՝ անկախ թիմի կողմից, որը կատարյալ պայմաններում, պետք է անկախ լինի ծրագրի գնահատման և հաստատման գործընթացում ներգրավված թիմից: Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատման հիմնական նպատակը ծրագրի հաջողությունների և ձախողումների գնահատումն է՝ համակարգային պահանջները և ընթացակարգերն աստիճանաբար փոփոխելու նկատառումներով՝ ապագա ՊՄԳ-ների շրջանակներում ավելի լավ վերջնարդյունքների ապահովմանն օժանդակելու նպատակով:

11.8 Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է սահմանվի կամ նախատեսվի ՊՄԳ պայմանագրում և հավաքագրվի ՊՄԳ-ի իրականացման ընթացքում: ՊՄԳ-ների գնահատման չափանիշները և մեթոդները պետք է հստակ սահմանվեն ենթաօրենդրական ակտերում/ուղեցույցներում, իսկ անկախ թիմը՝ պատվիրատուի հետ համագործակցությամբ, պետք է նույնականացնի այն շահառուներին, որոնք կարող են լավագույնս տրամադրել ցանկացած հավելյալ տեղեկատվություն՝ գնահատումն ավարտին հասցնելու համար:

11.9 Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատումը կօգնի բարելավել պայմանագրի մշակումը և ծրագրերի համար իրատեսական և իրագործելի նպատակների սահմանման գործընթացները: ՊՄԳ ստորաբաժանումը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի գնահատման հաշվետվությունները: Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատումից քաղված դասերը կարող են հանգեցնել քաղաքականության, օրենսդրության, մեթոդաբանությունների և ընթացակարգերի բարելավումների՝ ՊՄԳ-ներից առավել բարձր փողի դիմաց արժեք ստանալու համար:

* * *

ՀԱՎԵԼՎԱԾ. ՊՄԳ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

ՊՄԳ ինստիտուցիոնալ համակարգի հիմնական մասնակցները և դրանց հիմնական գործառույթները.

- Հաստատում է ՊՄԳ համակարգը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը
- Կայացնում է կոնկրետ ՊՄԳ ծրագիր իրականացնելու վերաբերյալ որոշում

- Անդրադառնում է ՊՄԳ ծրագրի ֆիսկալ գնահատմանը՝ հիմք ընդունելով Լիազոր նախարարության կողմից տրամադրված վերլուծությունները
- Տրամադրում է բյուջեի վրա ազդեցության վերաբերյալ եզրակացություն
- Մշակում է ՊՄԳ մրցույթի անցկացման կանոնները



- Հանդիսանում է ՊՄԳ ստորաբաժանման կառավարման խորհուրդը
- Կառավարության է ներկայացնում.
  1. Եզրակացություն ՊՄԳ համակարգը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ
  2. Եզրակացություն ՊՄԳ ծրագրի իրականացման և իրականացվող ՊՄԳ ծրագրում փոփոխություն անելու առաջարկի վերաբերյալ

- Ձևակերպում է ՊՄԳ նախնական հայեցակարգը
- Ապահովում է նախնական և հիմնական տեխնիկատնտեսական և այլընտրանքների ուսումնասիրությունների իրականացումը
- Մշակում է ՊՄԳ գործարքի փաստաթղթերի փաթեթը
- Իրականացնում է ՊՄԳ գործարքի պաշտոնական գնահատումը (VfM, PSC)
- ՊՄԳ ծրագրի ամբողջական փաթեթը ներկայացնում է ՊՄԳ հանձնաժողով՝ եզրակացություն ստանալու նպատակով
- ՀՀ կառավարություն է ներկայացնում ՊՄԳ ծրագրի իրականացման, ինչպես նաև իրականացվող ՊՄԳ ծրագրի փոփոխության վերաբերյալ վերաբերյալ որոշման նախագիծը
- Կազմակերպում է ՊՄԳ մրցույթը
- Համակարգում է ֆինանսական և կոմերցիոն պայմանների, ինչպես նաև ՊՄԳ ծրագրի իրականացումը
- Իրականացնում է ծրագրի մշտա-դիտարկումը և վերահսկողությունը

- Մշակում է ՊՄԳ քաղաքականությունը և օրենսդրությունը

- Հանդիսանում է ՊՄԳ հանձնաժողովի քարտուղարը
- Ըստ անհրաժեշտության՝ խորհրդատվական ծառայություններ է մատուցում համակարգի բոլոր օղակերին բոլոր փուլերում
- ՊՄԳ հանձնաժողովին է ներկայացնում օրենսդրական նախաձեռնություններ, այդ թվում՝ մշակված փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատման արդյունքում

Որոշումների կայացումը ՊՄԳ գործարքների իրականացման հիմնական փուլերում.

#	Ծրագրի փուլ	ՀՀ կառավա-ություն	ՀՀ կառավար-ության լիազորած ՊՄԳ հանձնաժողով	ՊՄԳ ստորա-բաժանում	Ֆինանսների նախարա-ություն	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարա-ություն	Լիազոր նախարա-ություն / Պատվիրատու
1	**ՊՄԳ ծրագրի իդենտիֆիկացիա** • ՊՄԳ նախնական հայեցակարգի ձևակերպում • Նախնական տեխնիկատնտեսական և այլընտրանքների ուսում-նասիրությունների իրականացում			Օժանդակ		Օժանդակ	Առաջատար
2	**ՊՄԳ ծրագրի նախնական մշակում և նախագծում** • ՊՄԳ տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվության պատրաստում • ՊՄԳ գործարքի փաստաթղթերի փաթեթի մշակում			Օժանդակ	Օժանդակ	Օժանդակ	Առաջատար
3	**Պաշտոնական գնահատում** • VfM, PSC			Օժանդակ	Օժանդակ	Օժանդակ	Առաջատար
4	**ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշման կայացում**	Առաջատար	Օժանդակ	Օժանդակ			
5	**ՊՄԳ մրցույթի / գնումների փուլ**			Օժանդակ	Օժանդակ		Առաջատար
6	**Կոմերցիոն պայմանների համաձայնեցում** • ՊՄԳ պայմանագրի ստորագրում • կողմերի՝ դրանով նախատեսված պարտավորությունների ծագման համար անհրաժեշտ բոլոր նախա-պայմանների իրականացման ապահովում			Օժանդակ	Օժանդակ		Առաջատար

#	Ծրագրի փուլ	ՀՀ կառավա-ություն	ՀՀ կառավար-ության լիազորած ՊՄԳ հանձնաժողով	ՊՄԳ ստորա-բաժանում	Ֆինանսների նախարա-ություն	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարա-ություն	Լիազոր նախարա-ություն / Պատվիրատու
7	**Ֆինանսական պայմանների համաձայնեցում** • ֆինանսական և ապահովման միջոցների տրամադրման հետ կապված բոլոր փաստաթղթերի (ներառյալ՝ ուղիղ պայմանագրի) ստորագրում • կողմերի՝ դրանցով նախատեսված պարտավորությունների ծագման համար անհրաժեշտ բոլոր նախա-պայմանների իրականացման ապահովում, ինչը հնարավորություն է ստեղծում սկսել ծրագրի ֆինան-սավորումը			Օժանդակ	Օժանդակ		Առաջատար
8	**Ծրագրի իրականացում** • նախագծում/(վերա)կառուցում/շահագործում)			Օժանդակ			Առաջատար
9	**Ծրագրի մշտադիտարկում ու վերահսկողություն**			Օժանդակ			Առաջատար
10	**Փաստացի արդյունքների վրա հիմնված գնահատում** • Ծրագրի հաջողությունների և ձախողումների գնահատում • Համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների մշակում			Առաջատար	Օժանդակ	Օժանդակ	Օժանդակ